

LGA

—

✓ 1170

1999



ԹՈՒՐԻ ԽԱՂԱՑՈՂԻ  
ՀԱՂ ԳԵ

# ԵՐՆՍՅՈՑՄԱՆ

፩፻፲፭.

## Պ. ՊԵՏՐՈՍԻ ԱԼՅ

ԹԻԳՐԻՄ

ՏՊԱՐԱՆ ՄՐՎՈ. ՎԱՐԴԱՆԵԱՆՅ ԻՒ ԲՆԿ.


1882

ԻՒՐ ՀԱՅՐԱԿԻՆԱՄ ԲՈՒՐԳՈՐԵՐԻՆ

Բ. Ա. Ե.—ԵՂ Բ Ա. Ր Ց

ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼԵԱՆՑ

Դօզ. Պենզորու 2 Մարտ 1882 թ. Թիֆլիս



Տիպ. Մօվս. Վարդանյանց և Կ. Տրոից. փր. № 11

արևաց շինող խան մի պատ մասն  
մասնաւ մասի բեր Ֆեռար արտ խոզայ  
քնոց թիրան վախար մասն չ հեղայ  
լոցի մէ Ֆեռ անարան զգուն ընալոյ զեզու  
խճանքի անմահաւոց մի պատ լին  
ան անձանանց խանուան մէ անզու պատ  
**ԹՈՒՂՓ ԽԱՂԱՑՈՂԻ ԲԱՂԴԵ**

18. Թուականի ամառը Պիրմօնտի ջը-  
րերը սովորականից աւելի յորդացել էին:  
Օրէ ցօր հարուստ եւ նշանաւոր օտարա-  
կանների խուռն բազմութիւնը աւելանում  
էր 'ի մեծ ուրախութիւն ամէն տեսակ շա-  
հախնդիրների: Թուղթ խաղացողները՝ իբրեւ  
փորձուած մարդիկ այս դիպուածում: դիտ-  
մամբ ցրում էին ժողովրդի առաջ իրանց  
փայլուն ոսկիները, յուսալով՝ որ հրապուրիչ  
առարկան կունենայ իւր ազդեցութիւնը  
ձգելով իրանց ձեռքը աւելի ազնիւ որս:

Ո՞վ չը գիտէ, որ այդ ժամանակ ամէն  
մարդ, շատ թէ քիչ, գուրս է գալիս իւր  
ամենօրեայ կեանքի ուղիղ ճանապարհից եւ  
կտամաւ անձնատուր լինում անգործունէու-  
թեան՝ անցկացնելով ժամանակը բաւակա-  
նութեանց եւ զուարճութեանց մէջ, որով-

4/11/20 - ԱՅ

29. 11/20

հետեւ խաղը մի տեսակ գրաւիչ հրապուրանքով նոցա ձգումէ դէպի իրան։ Յաճախ կարելի է տեսնել այնպիսի մարդիկ, որոնք երբէք իրանց ձեռքը խաղաթուղթ չեն վերցրել բայց մի պատահական դիպուածով դարձել են կատարեալ թղթամոլներ, մանաւանդ որ այն ժամանակ բարձր դասի մէջ ամէն օր մի բան խաղալը լաւ վարմունք էր համարվում։

Բայց ոչ ընդհանուրի չափազանց ձըդտումը դէպի խաղը, ոչ բարձր դասի վարմունքը, ինչպէս երեւումէր, ամենափոքր ազդեցութիւն անդամ չէին անում մի նորեկ երիտասարդ գերմանացի պարոնի վերայ, որին մենք Զիդֆրիդ անունը պէտք է տանք։ Երբ ամբողջ հասարակութիւնը ճեղքելով խմբում էր խաղասեղանների շուրջը, այնպէս որ չէր մնում մէկը, որի հետ Զիդֆրիդը, ինչպէս նա սիրումէր, մի երկու խօսք ասէր որեւիցէ պիտանի եւ հետաքրքիր առարկայի մասին, նա կամ ընտրում էր իւր համար միայնակ զքոսանքը ինքն իրան երեւակայելով, եւ կամ փակուած իւր սենեակում՝ պարապումէր ընթերցանութեամբ կամ մի որեւիցէ գրաւոր աշխատութեամբ։

Զիդֆրիդը երիտասարդ էր, ինքնազը լուխ, հարուստ, տեսքով գեղեցիկ եւ ունէր ամէնքին դուրեկան մի բնաւորութիւն։ Այս պատճառով զարմանալի չէր, որ վայելում էր ընդհանուրի, նա մանաւանդ կանանց համակրութիւնը։ Բացի դորանից, կարծես թէ մի երջանիկ աստղ նորա ամէն ձեռնարկութեանց մէջ հովանաւորումէր նորան։ Սիրոյ որոգայթները, որոնց վերայով անդադար անցնումէր, յաջողութեամբ ոչնչանում էին նորա ձեռքով, մինչեւ անգամ այնպիսիները, որոնցից մի այլ մարդ դըժուար թէ կարողանար ազատուել։ Բարոնի ծանօթների խմբի մէջ՝ երբոր խօսքը գալիս էր նորա անսովոր բաղդի վերայ, սովորաբար պատմումէին իրանց ասածը հաստատելու համար՝ դեռ եւս շատ փոքր ժամանակ նորա հետ պատահած ժամացոյցի դէպքը։

Մի անգամ Զիդֆրիդը, երբ դեռ հոգաբարձութեան տակ էր, իւր մի ճանապարհորդութեան ժամանակ այնպիսի մի կարիք զգաց, որ ստիպեց նորան ծախելու իւր թանկագին աղամանդներով զարդարած ժամացոյցը, որպէս զի միջոց ունենայ քաղաքից դուրս գալու։ Ժամացոյցը ի հարկ է դաքից դուրս գալու։

պէտք էր չնչին գնով ծախուէր, բայց նորա  
բաղդից հենց այն իջեւանում ուր նա էր  
իջել, եկաւ մի երիտասարդ իշխան, որ կա-  
մենում էր գնել ուզիղ այնպիսի մի թանկագին  
ժամացոյց. եւ այս կերպով Զիգֆրիդը ստա-  
ցաւ իւր ժամացոյցի խկական արժողու-  
թիւնը. Այդ ժամանակից անցաւ մի ամբողջ  
տարի Զիգֆրիդը չափահաս դարձաւ եւ բա-  
ցարձակ տէր իւր ստացուածքի. Մի անգամ  
նա լրագրի մէջ կարդաց, թէ այս ինչ տե-  
ղում վիճակ պէտք է ձգեն մի թանկագին  
ժամացոյց. Նա տոմսակ վերցրեց եւ տա-  
րաւ իւր ծախած ժամացոյցը. Նա շուտով  
այդ ժամացոյցը փոխեց մի թանկագին մա-  
տանու հետ եւ յետոյ ինքը ծառայութան  
մուտ իշխան ֆօն Գ... մօտ. Մի տարուց  
յետոյ, երբ նա թողել էր ծառայութիւնը  
իշխանը՝ ի նշան իւր ողորմածութեան ու-  
զարկեց նորան մի թանկագին ադամանդ-  
ներով զարդարած ժամացոյց մի ծանր ոս-  
կեայ շղթայով. ժամացոյցը դարձեալ Զիգ-  
ֆրիդին էր.

Այս պատութիւնից յետոյ խօսակցու-  
թիւնը իւր կարգին գալիս էր Զիգֆրիդի  
հասատակամութեան վերայ—երբէք չը մօ-  
տենալ խաղաթղթերին, դէպի որը նա իւր

անսովոր բաղդով կարող էր մեծ հակու-  
մըն ունենալ: Այս առարկայի մասին եղած  
բոլոր խօսակցութիւնները եւ դատողու-  
թիւնները առհասարակ այն վերջնականու-  
թեանն էին գալիս, թէ յիրաւի բարոնը,  
իւր բոլոր փայլուն յատկութեանց հետ  
միասին, շատ ժլատ էր՝ եւ ինչպէս կրակից՝  
այնպէս վախենում էր ամենափոքր կորստիդը,  
թէ եւ պէտք է նկատել որ Զիգֆրիդը երբէք  
մի այդպիսի կասկածի առիթ չէր տուել  
բայց որովհետեւ ամբոխը առհասարակ շատ  
է սիրում մէկին անուանարկել ինքը նա էլ  
որ նա բարձր լինէր ուրիշներից այդ պատ-  
ճառով եւ Զիգֆրիդի ժլատութեան մասին  
արած երեւակայական ենթագրութիւնները,  
իբրեւ հետեւանք նորա խաղի չը մօտենա-  
լուն, տարածուեցան հասարակութեան մէջ,  
թէ եւ բոլորովին զուրկ ճշմարտութիւնից:  
Նուտով Զիգֆրիդի ականջին հասան  
նորա համար անտանելի այս խօսքերը, եւ  
որովհետեւ նա իւր աղնիւ ու քաղաքավարի  
բնաւորութեամբ ամէնից առաւել ատում էր  
ժլատութիւնը, այդ պատճառով կամեցաւ  
միանգամից վերջ գնել այն բամբասանքնե-  
րին, սորա համար, չը նայելով իւր զզուա-  
նաց դէպի թղթախաղը, նա վճռեց դիտ-

մամբ տանուլ տալ երկու հարիւր լուիդոր,  
որպէս զի հեռացնի իրանից այդ վշտացու-  
ցիչ կասկածանքները:

Այս դիտաւորութեամբ՝ վերցնելով նշա-  
նակած գումարը՝ մօտեցաւ խաղասեղանին,  
բայց այստեղ էլ նորա բաղդը բանեց: Իւ-  
րաքանչիւր թուղթը, որ նա դնումէր, ան-  
պատճառ տանումէր: Հին, փորձուած խա-  
ղացողների բոլոր գաղտնի հաշիւները բոլո-  
րովին ոչնչանումէին Զիգֆրիդի խաղի ժա-  
մանակ: Փոխումէր նա թղթերը, թէ՛ գը-  
նումէր բոլորովին մտացածին կերպով, այ-  
նուամենայնիւ դարձեալ տանողը նա էր:  
Առհասարակ բարոնը մինչ այն աստիճան  
հազուագիւտ խաղացողի պատկեր էր ներ-  
կայացնում, որ այցելողները՝ ըլ կարողա-  
նալով բացատրել այդպիսի մի տարօրինակ  
երեւոյթ, սկսումէին մինչեւ անգամ ան-  
հանգստութեամբ խօսել եւ կասկածել թէ՛,  
ըլ լինի նա խելագարուել է այդքան յաջո-  
ղութիւնից՝ թէ չէ բոլորովին զարմանալի  
է, որ մարդ առողջ դատողութիւն ունենայ-  
եւ դժգոհ լինի իւր բաղդաւորութիւնից:

Տարած նշանաւոր գումարները գրգռե-  
ցին բարոնին շարունակել խաղը այն յու-  
սով, որ անկասկած բաղդը մի օր կը փո-

խուի եւ նա կը հասնի ցանկացած կորսո-  
տին: Բայց ոչ մի կերպով նպատակին չէր  
հասնում Որքան նա շատ էր խաղում: այն-  
քան էլ բաղդը նորան աւելի եւ աւելի յա-  
ջողումէր:

Այն ինչ, մինչեւ անգամ Զիգֆրիդի  
համար աննշմարելի կերպով, սէրը դէպի  
ֆարաօն խաղը՝ աւելի հասարակ, բայց ա-  
ւելի ջերմ կերպով սկսեց փոքր առ փոքր  
նորա վերայ կատարելապէս իշխել: Նա այլ  
եւս չէր բարկանում իւր բաղդի յաջողու-  
թեան վերայ: Խաղը ինքն ըստ ինքեան  
կաշկանդել էր նորա միտքը. ամբողջ գի-  
շերներ անց էր կացնում խաղասեղանի  
առաջ՝ գրաւուած այն հրապուրիչ առար-  
կաներով, որոնց մասին առաջ լսել էր իւր  
բարեկամներից, բայց չէր կամենում նոցա  
հաւատալ:

Մի գիշեր, երբոր բանկ բացանողը (բահ-  
կութե) հէնց այն էր վերջացրեց վերջին  
թուղթը, Զիգֆրիդը բարձրացնելով աչքե-  
րը յանկարծ տեսաւ իւր առաջ կանգ-  
նած մի չափահաս մարդ, որ տիսուր ու  
ծանր կերպով նայում էր ուղիղ նորա երե-  
սին: Դորանից յետոյց ամէն երեկոյ եւ ա-  
մէն անգամ, երբ որ նա վերջացնելով խո-

զը բարձրացնումէր գլուխը, նորա աչքերը անպատճառ պատահումէին անծանօթի մուայլ աչքերին, այնպէս որ մի տեսակ ծանր եւ տանջող զգացողութիւն ակամայ հաստատուեցաւ նորա հոգու մէջ:

Խաղը վերջանալուց յետոյ անծանօթն էլ թողեց գահինը, բայց հետեւեալ գիշերը դարձեալ նստեց Զիգֆրիդի առաջ եւ նորից սկսեց անթարթ աչքերով նայել նորա վերայ: Զիգֆրիդը այս անդամ գեռ զսպեց իրան, բայց երբ որ նոյն բանը կրկնուեցաւ եւ երրորդ գիշերը, եւ անծանօթը դարձեալ իւր բոցոտ հայեացը ձգեց Զիգֆրիդի վերայ, նա այլեւս չը կարողացաւ համբերել եւ առաց ընդմիջելով խաղը:

—Պարմն, չի կարելի արդեօք, որ ձեզ համար մի ուրիշ տեղ ընտրէք, որովհետեւ այստեղ գուք խանդարումէք իմ խաղը:

Անծանօթը տիրութեամբ ժպտաց, գըլուխ տուեց ՚ի նշան համաձայնութեան եւ առանց մի խօսք ասելու խկոյն եւ եթթոեց գահինը:

Հետեւեալ գիշերը նա դարձեալ եկաւ եւ նստեց իւր առաջուայ տեղը—բարոնի հանդէպ եւ կարծես թէ նայումէր նորան աւելի մուայլ եւ սուր հայեացքով:

Ս.յս անդամ արդէն Զիգֆրիդը բարկացած աղաղակից.

—Պարմն, եթէ դուք կամենումէք շարունակել ձեր հանաքնները, ես ձեզ խընդրում եմ: որ դորա համար մի ուրիշ տեղ եւ ուրիշ ժամանակ ընտրէք, իսկ այժմ...

Եւ այս ասելով ձևքով նշան արաւցոյց տալով դէպի գուռուք՝ եւ սորանով հասկացրեց այն, ինչոր չը վերջացրեց խօսքերով:

Առաջին գիշերուայ նման, անծանօթը հնազանդութեամբ խոնարհուելով հեռացաւ նոյն գառն ժպիտով:

Գրգռուած խաղով գինով եւ նոյնպէս անծանօթի հետ պատահած դէպքով Զիգֆրիդը ամբողջ գիշերը չը կարողացաւ փակել աչքերը: Անծանօթի պատկերը մինչեւ առաւօտ հետեւումէր նորան: Վշտացած դէմքը, սեւ, խոր ընկած աչքերը, վայելուչ հասակը, յանդիմանողական ձեւերը—այս բոլորը պարզ կերպով նկարվումէին Զիգֆրիդի աչքերի առաջ: Մտածելով այն բանի մասին, թէ անծանօթը ինչպէս տարաւ իւր վիրաւորական խօսքերին եւ ինչպէս տխուր եւ վշտացած հեռացաւ գահինից, Զիգֆրիդը չը կարողացու զսպել եւ ակամայ աղաղակեց:

— Այ, ես նորա առաջ մեղաւոր էի,  
շատ մեղաւոր. միթէ իմ ճակատին գրած  
է, ինչպէս մի անտաշ երիտասարդի, անդա-  
դար վիրաւորել մարդոց, առանց մի որեւի-  
ցէ պատճառի նոցա կողմից:

Երկար մտածելով այս խնդրի վերայ,  
Զիգֆրիդը այն եզրակացութեան հասաւ,  
որ անձանօթի տխուր եւ զննողական հայ-  
եացքը, արդարեւ մի մեծ կարիքի արտայայ-  
տութիւն էր, որի մէջ նա գտնվում էր  
այն ժամանակ, երբ ինքը՝ բարոնը, անձնա-  
տուր եղած խաղի՝ բռներով ժողովում էր  
ոսկիները: Այս մտածողութեանց հետեւանքը  
այն եղաւ, որ Զիգֆրիդը վճռեց միւս օրը  
անպատճառ որոնել անձանօթին եւ պար-  
զաբանել բոլոր գործը:

Դէպքը այնպէս բերաւ, որ առաջին  
մարդը, որին պատահէց Զիգֆրիդը՝ առա-  
ւոտը դուրս գալով զբօննելու մեմելիքում,  
նոյն ինքը անձանօթն էր:

Բարոնը մօտենալով նորան խակոյն սկսեց  
խօսել անցեալ գիշերների դէպքերի մասին  
եւ վերջացրեց անկեղծութեամբ խնդրելով  
ներել իւր անքաղաքավարութեանը: Անձա-  
նօթը պատասխանեց, թէ ինքը նորա վար-  
մունքի մէջ ներողութիւն խնդրելու ար-

ժանի ոչինչ չի գտնում: որովհետեւ տաքա-  
ցած խաղացողը իւր գործերի համար միշտ  
պատասխանատու լինել չի կարող եւ բացի  
գորանից, ինքը կամակորութեամբ մնալով  
իւր տեղում եւ բացարձակ կերպով խան-  
գարելով բարոնի խաղը, պատճառ եղաւ նո-  
րա սաստիկ բարկանալուն:

Զիգֆրիդը իւր խօսակցութիւնը առաջ  
տարաւ ասելով թէ ինքը շատ լաւ է հաս-  
կանում: ինչպէս երբեմն ձնշող հանգամանք-  
ները հասցնում են ամենաստոր աստիճա-  
նի, մինչեւ անգամ մեծ ուսումնական եւ  
զարգացած մարդոց, եւ յետոյ բաւականին  
պարզ կերպով առաջարկեց, որ բոլոր հոգ-  
ւով պատրաստ է օգնելու անձանօթին իւր  
տարած փողերով, եթէ միայն նա այդ բանի  
մէջ կարիք է գգում:

— Պարծն, ասաց անձանօթը, գուք  
ինձ աղքատ էք համարում, բայց սխալվում  
էք, որովհետեւ՝ հարուստ չը լինելով ես ու-  
նիմ կատարեալ բաւականութիւն իմ հա-  
մեստ կեանքի համար, որին ես ընտելացել եմ:  
Բացի գորանից, թոյլ տուէք ինձ նկատելու,  
որ առաջարկելով վարձատել ինձ ոսկով  
ձեր արած վիրաւորանքի համար, գորանով  
հակասում էք ձեզ, եթէ գուք, ինչպէս ա-

սացիք, ինձ չափաւոր եւ լուսաւորուած անձն էք համարում։  
—Կարծեսթէ ես սկսում եմ հասկանալ ձեր ասածը, ասաց Զիգֆրիդը երկիւզով, ուստի եւ շոտապում եմ աւելացնել, որ եթէ դուք բաւականութիւն էք պահանջում։ Ես պատրաստ եմ մինչեւ անգամ այս բովէիս իսկ տալ ձեզ։

—Այս Աստուած, աղաղակեց անծանօթը, ճշմարիտ մի անհաւասար մենամնրութիւն կը լինէր։ Ես համոզուած եմ։ Որ դուք եւս ինձ նման մենամարտութիւնը երեխայական զուարծութիւն չէք համարում ու հեռու էք այն մոռից, թէ մի քանի կաթիլ արիւնը, որ մատի չանկուելուց կը թափուի, կարող է վերականգնել մարդու արատաւորուած պատիւը։ Կեանքի մէջ պատահում են այնպիսի դէպքեր, երբ երկու մարդոց բնակութեան համար այս աշխարհը նեղ է, եթէ մինչեւ անգամ մէկը ապրէր Կովկասում։ Իսկ միւսը Տիբերիոս գետի ափերին, բայց գարձեալ այս տարածութիւնը ոչինչ նշանակութիւն չէր ունենալ, քանի որ մէկը գոյութիւն ունէր, թէեւ միայն միւսի մոռի մէջ։ Ի հարկէ այստեղ մենամարտութիւնը միայն կարող է որոշել, թէ նոցանից

որը պէտքէ տեղ տայ միւսին, իսկ մեր մէջ, ինչպէս արդէն ասացի, մենամարտութիւնը շատ անհաւասար կը լինի, որովհետեւ ձեր կեանքը աւելի թանկագին է։

Եթէ ես սպանեմ ձեզ, դորանով կը ոչնչացնեմ ամենաուրախալի յոյսերի մի ամբողջ աշխարհ, իսկ եթէ ես ինքս մեռնեմ այն ժամանակ գուք կը կործանէք ամենատխուր, վաղուց արդէն խորտակուած մի գոյութիւն։ Բայց ամէն դէպքում եւս, կրկնում եմ, որ ինձ բոլորովին վիրաւորուած չեմ համարում այս բանում։ Դուք ինձ ինգրեցիք հեռանալ, ես էլ կատարեցի։

Վերջին խօսքերը անծանօթը արտասանեց մի այնպիսի ձայնով, որ զգալի կերպով ցոյց էր տալիս նորա ներքին տանջանքը, եւ որ ստիպեց Զիգֆրիդին միւս անգամ ներողութիւն խնդրել։ Սորա հետ միասին նա ամենեւին չը ծածկեց, որ ինքն էլ չի կարողանում հասկանալ թէ ի՞նչու համար արդարեւ չը կարողացաւ տանել անծանօթի հայեացքը, որ վերջին աստիճանի ներգործեց իւր նեարդերի վերսոյ։

—Այդ դէպքում ասաց անծանօթը, եթէ իմ հայեացքը թափանցեց մինչեւ ձեր հոգու խորքը, ուրեմն՝ իբրեւ մտերիմ

կը ցանկայի, որ նա կարողանար զգուշացնել ձեզ այն սոսկալի վտանգից, որի մէջ դուք գտնվում էք: Ինձ վիրաւորումէ այն ուրախ դէմքը եւ այն անհոգ ուրախութիւնը, որոնցով դուք կանգնումէք զարհուրելի անդունդի եզերքին: Մի հարուած միայն — եւ դուք ուղիղ նորա մէջ կը գլորուիք: Ուրիշ խօսքերով՝ ես կամենում եմ ասել, որ դուք կանգնած էք մի այնպիսի ճանապարհի վերայ, որով կը դառնաք սարսափելի, յուսահատ մի խաղացող եւ դորանով կը կորցնէք ձեզ ընդ միշտ:

Զիգֆրիդը սկսեց հաւատացնել, որ անծանօթը բոլորովին սխալվումէ, եւ պատմեց նորան մանրամասնաբար այն պատճառները, որոնք զրդել էին իրան մօտենալու խաղասեղանին, աւելացնելով, որ իւր կեանքում երբէք մէր չի զգացել դէպի խաղը, այլ ընդհակառակն վճռել է ինչոր էլ լինի, տանուլ տայ մի քանի հարիւր լուիդոր եւ այնուհետեւ վերջացնի խաղալը. բայց տարաբաղդաբար բաղդը անփոփոխ կերպով հետեւումէր նորան:

ԱՇ, բացականչեց անծանօթը, հէնց այդ բաղդն է այն զարհուրելի հրապուրանքը, որի օգնութեամբ չար, թշնամական կամքը բոլո-

րովին իշխումէ մեր վերայ: Բառն, ձեր բաղդը խաղի մէջնէ, եւ աչա այն պատճառը, որ դրդել է ձեզ մօտենալու նորան: Այն ձեւերը, որոնցով դուք ձեզ պահպանումէք, որով բուռն ցանկութիւնը սկսումէ վերջնականապէս տիրել ձեր վերայ—այս բոլորը զարմանալի կերպով ինձ յիշեցնումէին մի դժբաղդ, բոլորովին ձեզ նման մի երիտասարդի վիճակ: Աչա այն պատճառը, թէ ինչու համար ես այնպէս ուշի ուշով նայումէի ձեր վերայ եւ հաղիւ էի կարողանում ինձ զսպել, որպէս զի չասեմ բառերով այն, ինչոր կամենումէի արտայայտել հայեացքով: Այն ժամանակ ես կամենումէի աղաղակել. «ՈՇ նայիր, նայիր, ինչպէս զեւերը պատրաստ են բունելու քեզ եւ գլորելու Օրկուսի մէջ»: Բայց աժմ հոգւով ուրախ եմ, որ կարողացայ ծանօթանալ ձեզ հետ: Թոյլ տուէք ինձ պատճելու այն անբաղդի պատմութիւնը, որի մասին յիշեցի, եւ ես համոզուած եմ, որ այն ժամանակ դուք եւս կը համոզուիք, թէ միայն խանդաբարուած երեւակայութեան դատարկ ցնորքը չէր, որ ստիպումէր ինձ ձեզ վրտանգի մէջ տեսնել եւ զգուշացնել:

Զիգֆրիդը եւ անծանօթը նստեցան իրանց մօտ գտնւող նստարանի վերայ եւ վեր-

ջինը սկսեց իւր պատմութիւնը այսպէս՝

ԱՆՏԱՆՈԹԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Ձեզ պէս, բորո՞ն, երիտասարդ Մէնար ասպետին նախախնամութիւնը պարգեւել էր այն շնորհները, որոնց օգնութեամբ ձեռք են բերվում մարդոց նախանձոտ եւ կանանց բարեհաճոյ յարգանքը: Եթէ նա մի բանում ստոր էր ձեղանից, այդ միայն հարստութեան մէջն էր: Նա համարեա միշտ կարօտութեան մէջ էր եւ միայն յարատեւ չափաւորութեամբ կարողանում էր հասարակութեան մէջ պահպանել իւր կշիռը եւ նշանակութիւնը, որ օրէնքով պատկանում էր նորան՝ իբրեւ մի հին յայտնի ցեղի յաջորդի: Այս չափազանցութիւնը ստիպում էր նորան անպայման հրաժարուել խաղից, դէպի որը նա մինչեւ անգամ ամենափոքրիկ ձգտումն չ'ունէր եւ այդ պատճառով այս հրաժարումը նորա համար մի մեծ կորուստ չէր: Սակայն յաջորդութիւնը ամէն տեղ ուղեկցում էր Մէնարին, այնպէս որ նորա բաղդը իւր ծանօթների մէջ առակի ձեւ էր ստացած:

Մի անգամ բոլորովին պատահական

կերպով, այցելեց մի խաղատուն, որտեղ նորա բարեկամները տաքացած խաղում էին:

Մէնարը բոլորովին չը մասնակցելով խաղին, սկսեց կամաց կամաց մանգալ գահին ծում՝ խորասուզուած բոլորովին ուրիշ մտածութեանց մէջ, եւ միայն երբեմն խաղասեղանի վերայ ձգում էր մի հայեացք, ուր բանկ բացանողը իւր առաջ դիզել էր ոսկին: Յանկարծ մի ծեր գնդապետ, որի խաղը մինչեւ այն ժամանակ շատ անյաջող էր գնում: տեսաւ Մէնարին եւ իսկոյն աղաղակեց: «Բնչ Աստուծոյ կրակ էք ուզում գուք տանել, քանի որ Մէնարը իւր բաղդով չի յայտնիլ թէ նա ում կողմն է բռնում: Բայց սպասեցէք, ես նորան այս բոպէիս այստեղ քարշ կը տամ եւ նա իմ փոխանակ կը խաղայ»:

Մէնարը կամենում էր ներողութիւն խնդրել, որ չի կարող խաղալ, բայց գնդապետը չը թոյլ տուեց նորան, մինչեւ որ նա կամայ ակամայ մօտեցաւ սեղանին:

Նորա բաղդը բերում էր հէնց այնպէս, ինչպէս ձերը, բարո՞ն:

Մէնարի գրած թուղթը անպատճառ եւ շուտով տանում էր: Նորա շնորհիւ բաւականին մեծ գումար փող յանկարծ երեւեցաւ գնդապետի ձեռքին: Նա կատա-

բեալ ուրախութեան մէջ էր, որ այնպէս  
յաջողակ կերպով իրան օգնութիւն կանչեց  
Մէնարի բաղդը:

Մէնարի զարմանալի բաղդը խաղի մէջ,  
որ բոլոր ներկայ եղողներին ապշեցնում էր,  
ինչպէս երեւում էր, ամենափոքր տպաւորու-  
թիւն անգամ չէր անում իւր վերայ: Ընդհա-  
կառակն, նա մինչեւ անգամ զգում էր, որ  
կարծես թէ իւր զգուանքը դէպի խաղը կըրկ-  
նապատկում էր, այնպէս որ, միւս օրը զարթ-  
նելով բոլորովին յոգնած եւ ջարդուած, իբ-  
րեւ հետեւանք այն անքուն անցկացրած գիշե-  
րուայ: նա հաստատապէս վրճռեց իւր կեան-  
քում այլեւս երբէք չ'այցելել խաղատները:

Այս վճիռը աւելի ամուր կերպով ար-  
մատացաւ նորա մէջ, իրան հասած այն  
ձայների պատճառով, թէ այն գիշերուանից  
սկսած գնդապետը մի կոպէկ անգամ չի կարո-  
ղացել տանել եւ միշտ կորցնելով իւր փողերը,  
մինչեւ անգամ յիմարութեան է հասել եւ  
այդ բանի մէջ մեղադրել է Մէնարին: Ամե-  
նայն թախանձութեամբ խնդրեց խաղալ  
իւր փոխանակ, կամ գոնէ, խաղի ժամա-  
նակ նստել մօտը, որպէս զի, նորա ասելով,  
հեռանան չար գեւերը, որոնք վատ թղթե-  
րը ձգում են նորա ձեռքը: Ամէնքին յայտնի

է, որ խաղացողները ենթակայ են ամե-  
նայիմար նախապաշարմանց: Վերջապէս այս  
բանը Մէնարին մինչ այն աստիճան զը-  
զուացրեց, որ մի անգամ նա ստիպուեցաւ  
բացարձակ կերպով բացատրել գնդապետին,  
եւ ուղղակի յայտնել նորան, թէ ինքը ա-  
ւելի շուտով կը համաձայնի նորա հետ մե-  
նամարտել, քան թէ խաղալ: Գնդապետը  
այն մեծ քաջերիցը չէր, այդ պատճառով էլ  
գործը տեղն ու տեղը վերջացաւ: Բայց Մէ-  
նարը անգադար ծայրայեղ բարկութեամբ  
մտաբերում էր այն գիշերը, երբ խաղի  
մէջ ծանօթացաւ այն յիմարի հետ:

Բարոնի խաղի մէջ ունեցած զարմանա-  
լի բաղդի լուրը տարածուեցաւ ամէն տեղ,  
բայց 'ի հարկէ եւ ոչ առանց սոլորական  
զրպարտութեան, իբր թէ նա իւր յաջողու-  
թեամբ պարտական է մի ինչոր գերբնական  
զօրութեան: Սակայն, չը նայելով Մէնարի  
խաղի մէջ ունեցած բաղդին, նա իւր հաս-  
տառակամութեամբ վերջնականապէս ձեռք  
էր վերցրել նորանից, որ առաւել եւս նը-  
պաստում էր ընդհանուրի դէպ 'ի նա ունե-  
ցած համակրութեան աւելանալուն:

Այդ ժամանակից անցաւ մօտ մի տա-  
րի, եւ մի անգամ Մէնարը մի ձեռնարկու-

թեան մէջ կորցնելով իւր ունեցած դրամագուխը՝ մեծ թշուառութեան մէջ ընկաւ: Նա դիմեց իւր ամենալաւ բարեկամներից մէկին օգնութիւն խնդրելու, որ թէպէտ եւ օգնեց նորան, բայց միեւնոյն ժամանակ զարմանալի եւ տարօրինակ մարդանուանեց, որ շարունակ տանջվում է իւր սեպհական մեղքերի պատճառով:

— Ճակատագիրը, ասում էր Մէնարի բարեկամը, մեզանից իւրաքանչիւրին ցոյց է աալիս, թէ ի՞նչ ճանապարհով պէտքէ որոնենք մեր բաղդատորութիւնը. բայց էթէ չենք լսում այն ցոյցերին եւ չենք հասկանում: դորա մէջ միակ մեզաւորը մենք ենք: Քո ճակատագիրը պարզ ասում է քեզ. եթէ դու կամենում ես բաւականութիւն եւ փող ստանալ, պէտք խաղաս, իսկ եթէ ոչ, դու ինքդ կը գատապարտես քեզ յակիտենական կարօտութեան, աղքատութեան եւ հպատակութեան:

Այս անգամ տուած խորհուրդը հասաւ իւր նպատակին: Մէնարը ակամայ յիշեց իւր անսովոր բաղդը: Հոգեկան ուշաթափութեամբ նա յիշեց առաջին փորձը այս ասպարիզի մէջ: Ոսկու ձայնը, բանկ բացանողների —gagnoe—perde—աղաղակնե-

ըը նորից որոշ կերպով զարնուեցան նորա ականջներին:

— Ճշմարիտ է, ճշմարիտ, ասում էր նա ինքն իրան, մի այդպիսի գիշեր միայն, եւ ես ապահոված կը լինիմ ամէն կարիքից եւ դժբաղդութիւնից, որ հասցրել են ինձ այս ամօթալի աստիճանին — ես պէտք է իմ բարեկամներից օգնութիւն խնդրեմ: Ես հաւատում եմ ճակատագրի վճռին եւ կամենում եմ հետեւել նորան:

Այն երեկոյեան նա ուղեւորուեցաւ խաղատուն իւր բարեկամի հետ, որ խորհուրդ էր տալիս նորան փորձել այս միջոցը եւ խաղը սկսելու համար տալիս էր քսան լուիդոր:

Եթէ վերջին անգամ Մէնարը յաջողութեամբ խաղաց գնդապետի համար, ուրեմն այժմ կարելի է ասել, թէ այդ յաջողութիւնը կրկնապատկուեցաւ: Կարծես թէ մի աներեւոյթ ձեռք լաւ թղթերը դուրս էր հանում նորա համար: Նա շարունակ տանում էր. թէեւ, ինչպէս երեւում էր, այդ թղթերը դնում էր առանց ընտրելու եւ կշռագատելու: Նա յաջող դէպք չէր որոնում, այլ ընդհակառակն, ինքը դէպքը բոլոր խաղը կարգադրում էր յօգուտ նորա:

Խաղից յետոյ հազար լուիգորը արդէն նորա գրպանումն էր։

Միւս օրը առաւտեան Մէնարը արթնացաւ իսկապէս խլացած։ տարած փողերը նորա առաջ սեղանի վերայ էին։ Առաջին գլայրկեանին կարծեց թէ երազ է տեսնում։ գիտմամբ նա ձեռքով աչքերը շփեց, սեղանը յետ ու առաջ շարժեց եւ վերջապէս համոզուեց, որ իւր առաջ դիզած ոսկիքը յիրաւի գոյութիւն ունին. նա արդարեւ համարել եւ հաշուել էր նոցա կրկին եւ կրկին անգամ։ Մէնարը իւր կեանքի մէջ առաջին անգամ զգաց, ինչպէս շահասիրութեան հոգին յանկարծակի զարթնելով բոլորովին տիրել է նորա հոգուն՝ ոչնչացնելով առջուայ մաքրութիւնը եւ չափաւորութիւնը, որ նա մինչեւ այն ժամանակ այնպէս զգուշութեամբ պահպանումէր։ Հէնց որ գիշերը հասաւ, նա դարձեալ շտապեց խաղասեղանի մօտ։ Բաղդը սարի նման կանգնած էր նորա կողմը. այնպէս որ մի քանի շաբաթ շարունակ խաղալով նա կարողացաւ իւր գրութիւնը բաւականին բարոքել։ Երկու տեսակ խաղացողներ կան։ Նոցանից մէկին գրաւումէ խաղը մի անբացատրելի հրապուրանքով, բայց նոքա բոլո-

բովին ուշադրութիւն չեն դարձնում ոչ տարածի եւ ոչ տանուլ տուածի վերայ։ Դիտել պատահական դէպքերը, նոցա մի տեսակ բաձր, նախասահմանած օրէնքի հնագանդեցնելու համար նախագիծներ հնարել՝ եւ ապա փորձել՝ չի յաջողել արդեօք սլանալ նոցա վերայ սեպհական ձեռքերով հիւսած թեւերով—ահա թէ ինչ է դրդում եւ ուրախացնում այս մարդոց։ Ես ճանանչումէի մի խաղացողի, որ ամբողջ գիշեր եւ ցերեկներ կողպուած իւր սենեակում խաղումէր ինքն իրան, եւ նա, իմ կարծիքով, ստոյգ խաղացող էր։

Միւս տեսակ խաղացողները ընդհակառակն, միայն տանելու վերայ են մտածում եւ խաղումեն բացառապէս այն նպատակով, որ հարստանան։ Այս վերջին տեսակին պատկանումէր եւ Մէնար ասպետը, որ իւր օրինակով ցոյց տուեց, թէ չափազանց սէրը դէպի խաղը ծանրացածէ նոյն խսկ մեր հոգու վերայ, որ բնածին յատկութիւն պէտքէ համարել։

Նուտով հասարակ խաղացողի դերը սկսեց նորա համար թերի երեւալ։ Տարած նշանաւոր գումարներով նա իւր համար սեպհական բանկ բաց արեց, որտեղ յաւի-

տենական բաղդր չը թողեց նորան. այնպէս  
որ նորա բանկը Փարիզի ամենահարուստ  
բանկերից մէկը եղաւ. Թուղթի խաղացողները  
իրանց սովորութեան համեմատ ամէն  
կողմից շտապում էին հարուստ եւ բաղդա-  
ւոր բանկ բացանողի մօտ:

Բայց խաղացողի գատարկ եւ յիմար  
կեանքը շուտով իւր կործանիչ աղդեցու-  
թիւնը ունեցաւ Մէնարի վերայ, յայտնա-  
պէս բթացնելով նորա թէ մարմնական եւ  
եւ թէ հոգեկան յատկութիւնները: Նա կոր-  
ցրեց բոլորովին այն յարգանքը, որ առաջ  
վայելում էր հասարակութեան մէջ. նորա  
անունը այլեւս չէր յիշվում իբրեւ հաւա-  
տարմութեան օրինակ գէպի իւր բարեկամ-  
ները եւ կամ իբրեւ զուարձասիրի օրինակ  
զրոյցների մէջ. կանաք այլեւս չէին պատ-  
փում Մէնարի ասպետականութիւնը: Նորա  
նախկին ջերմեռանդ սէրը պէպի արհեստը  
եւ գիտութիւնը բոլորովին անհետացաւ: Նո-  
րա գունատ դէմքի վերայ սեւ, մի տեսակ  
նսեմ հրով վայլող աչքերի մէջ երեւում էր  
նորա ձգտումների լիակատար արտայայ-  
տութիւնը: Ոչ թէ բաւականութիւն, այլ  
միայն փող էր որոնում նա խաղի մէջ, եւ  
կարծես թե ինքը սատանան էր նորա մէջ

այս սէրը մինչեւ այն աստիճան գրգը-  
ռողը: Մի խօսքով նա ոտից մինչեւ գլուխը  
խաղացող գարձաւ, այս բառի ընդարձակ  
նշանակութեամբ:

Մի գիշեր, խաղալու ժամանակ այնպէս  
պատահեցաւ, որ Մէնարը, թէեւ ոչինչ չը  
կորցրեց, բայց գորա հետ միասին նա այն  
յաջողութիւնը չ'ունեցաւ, ինչպէս առհա-  
սարակ պատահում էր: Խաղացողների թը-  
ւում կար եւ մի կարճահասակ, հասարակ  
հագուստով ծեր, որ արտաքուստ եւս շատ  
տգեղ էր. սա երկիւղով մօտենալով սեղա-  
նին վերջին ձգած թղթի վերայ դրեց իւր  
ոսկին: Միւս խաղացողները զարմանքով եւ  
սաստիկ արհամարանքով նայեցին այս անկոչ  
հիւրի վերայ, բայց ծերը այս բանի վերայ  
ամենափոքր ուշադրութիւն անդամ չը դար-  
ձրեց եւ ոչ մի խօսքով կամ շարժուածքով  
չը յայտնեց իւր անբաւականութիւնը:

Ծերի առաջին թուղթը ոչնչացաւ. նա  
դրեց երկրորդը, որ նոյնպէս տարան: Յե-  
տոյ անդադար վայր ձգելով իւր թղթերը  
մէկը միւսի հետեւից սկսեց կորցնել բոլորը՝  
մեծ բաւականութիւն պատճառելով միւս  
խաղացողներին: Երբ որ առաջադրած գու-  
մարը հինգ հարիւր լուիգորի հասաւ եւ որ

ծերը առաջուայ նման դարձեալ տանուլ տուեց, խաղացող խմբի մէջ բարձրացաւ մի անզուսպ ծիծաղ եւ ուրախութիւն:

—Այդպէս է, պարոն Վէրտուա, այդպէս, աղաղակեց մէկը, միայն թէ մի յուսահատուէք եւ առաջուայ պէս շարունակեցէք, կարելի է վերջը յաջողի ձեզ տանել ամբողջ բանկը:

Ծերը դառնութեամբ նայեց իրան ծաղրողին եւ խսկոյն արագութեամբ հեռացաւ: Մի ժամկից յետոյ կրկին վերադարձաւ գըրպանները ոսկով լի, բայց մինչեւ վերջը դարձեալ չը կարողացաւ խաղալ, որովհետեւ առաջուայ պէս ինչոր ունէր, բոլորն էլ տանուլ տուեց:

Մէնարը, չը նայելով իւր արհեսովի բոլոր գարշելիութեան, այնուամենայնիւ անհրաժեշտ էր համարում պահպանել իւր բանկի մէջ ներքին կարգ. եւ կանոն, այս պատճառով, միւս խաղացողների այնպիսի արհամարական վարմունքը դժբաղդ ծերի հետ, նորան բոլորովին դուր չ'եկան: Խաղը վերջանալուց յետոյ, երբ որ ծերը դուրս գնաց, նա յանդիմանութեամբ դարձաւ ինչպէս ծաղրածուին, որ նորան վիրաւորեց, նոյնպէս եւ միւս հիւրերին, պա-

տուիրլով նոցա, որ այլ եւս այդպիսի բաներ չ'անեն:

—Ի՞նչպէս, աղաղակելով պատասխանեց նորան հիւրերից մէկը, ուրեմն դուք չէք ճանաչում հին նրանչիսկօյ Վէրտուային, թէ չէ, դուք ոչ միայն նորա վերաբերութեամբ մեր վարմունքի մէջ ոչինչ չէիք գտնել դատապարտելի, այլ ընդհակառակն, ինքներդ եւս մեզ հետ կը համաձայնէիք անկասկած: Իմացէք ուրեմն, որ այդ Վէրտուան ծագումով նէապօլից է եւ տասնուհինդ տարի է արդէն, որ բնակվումէ Փարիզում՝ պարապելով ամենակեղտոտ եւ գարշելի վաշխառութեամբ, որպիսին միայն կարելի է երեւակայել: Նորա սրտի մէջ մարդկային զգացողութեան ամենափոքր նշոյլ անգամ չը կայ, եւ մինչեւ անգամ, եթէ տեսնէր իւր հարազատ եղբօրը մեռնելիս իւր ոտքերի տակ, այն ժամանակն իսկ չէր համաձայնիլ մի լուիդոր զոհել նորա փրկութեան համար:

Նորա սրտի վերայ ծանրացած են այն հարիւրաւոր ընտանեաց անէծքները, որոնք քայքայուած են նորա ստոր ձեռնարկութեանց շնորհիւ: Ով որ ճանաչումէ Վէրտուային, բոլորն էլ ատումեն եւ ամէն-

քըն էլ՝ի սրտէ ցանկանումեն տեսնել նորա անբաղդութիւնը եւ մինչեւ անգամ մահը—եւ այս բոլորը նորա արած չար գործքերի համար:

Նա երբէք չէ խաղում գոնէ այն ժամանակից, երբ Փարիզումն է ապրում: Եւ գուք տեսաք թէ մենք ինչպէս զարմացանք տեսնելով այն հին ժլատին, որ սիրտ արաւ մօտենալու խաղասեղանին: Ահա թէ ինչ պատճառով մենք ուրախացանք նորա տանուլ տուած փողերի համար, որովհետեւ այն անպիտան բաղդաւոր տեսնել խաղի մէջ, մեզ համար մեծ վիրաւորանք կը լինէր: Շատ հաւանական է, որ այն յիմարը խարուել է ձեր բանկի բաղդաւորութիւնից եւ մտածել է ձեզ ոչնչացնել, բայց ինչպէս երեւեցաւ դորա փոխանակ ինքը գզգզուեցաւ: Միայն չեմ հասկանում թէ Վէրտուան—այն ժլատը, ի՞նչպէս կարողացաւ վճռել եւ խաղալ մի այնպիսի նշանաւոր խաղ: Իսկ այժմին՝ ի հարկէ, այլ եւս այստեղ չի վերադառնալ եւ մենք կարող ենք մեզ ընդ միշտ ազատ համարել նորանից:

Սակայն այս գուշակութիւնը չ'արդարացաւ, որովհետեւ հետեւեալ գիշերը Վէրտուան նորից երեւեցաւ Մէնարի խա-

ղասեղանի մօտ եւ անցեալ օրուանից շատ աւելի տանուլ տուեց: Բայց սորանով նա բոլորովին չը յուսահատուեց, այլ ընդհակառակն, մինչեւ անգամ ժպտաց մի տեսակ չար, հեղնական ժպիտով, իբր թէ նախազգալով, որ գործը շուտով այլ ընթացք կ'ստանայ: Բայց իզուր... միայն նորա տանուլ տուած փողերն էին աւելանում ամէն գիշեր: այնպէս որ նորա կորուստը մեծ թուի էր հասնում—երեսուն հազար լուիդորի:

Մի անգամ, երբ միւսները բաւականին խաղացել էին, նա դարձեալ եկաւ գունաթափ, ինչպէս մեռել, կանգնեց սեղանից հեռու եւ ուղղեց մի խանգարուած յուսահատական հայեացք թղթերի վերայ, որ խառնումէր Մէնարը իւր ձեռքերի մէջ: Հաղիւ թէ սկսուեցաւ նոր խաղը եւ թղթերը բաժանեցին, յանկարծ Վէրտուան տղաղակեց մի այնպիսի սուր ձայնով, որ բոլորն էլ ակամայ գողացին.—«Կացէք»—եւ յետոյ մօտենալով սեղանին ու դառնալով գէպի Մէնարը, շարունակեց տխուր եղանակով. «Բարօն, իմ տունը Մէնտ— Օնէրօ փողոցումն է, փառաւոր, կահ կարասիքներով եւ ամէն պիտոյքներով զարդարած, միշեւ

անգամ տնտեսութեան համար հարկաւոր եղած ոսկով եւ արծաթով. գնահատած է ութսուն հազար ֆրանկով, կը համաձայնէք վերցնել այն իբրեւ գրաւ իմ դրած փողի համար»:

«Լաւ», սառնութեամբ պատասխանեց Մէնարը մենչեւ անգամ նորա վերայ չը նայելով, եւ այնուհետեւ սկսեց հանգիստ կերպով շարունակել խաղը:

«Դամա», ասաց Վէրտուան. Ակսուեցաւ խաղը: Նորա թղթերը անդադար վայր էին ընկնում եւ ոչնչանում: Ծերը յետ քաշուեցաւ եւ միայն յենուելով պատի վերայ կարողացաւ պահպանել իրան վայր ընկնելուց: Ոչ ոք նորա վերայ ամենափոքր ուշադրութիւն անգամ չը դարձրեց:

Ս.յդ միջոցին խաղը վերջացաւ եւ Մէնարը ժողովելով իւր խաղընկերներից տարած փողերը պահեց մի արկղի մէջ: Յանկարծ Վէրտուան այն անկիւնից, ուր նստել էր, գուրս եկաւ ուրուականի նման եւ մօտենալով Մէնարին խուլ ու մռայլ ձայնով ասաց: «ասպետ, մի խօսք»:

«Ե՛հ, էլ ի՞նչ կայ», հարցրեց Մէնարը բանալիքը պտըտեցնելով կողպէքի մէջ եւ արհամարական կերպով նայելով ծերին:

—Իմ բոլոր ունեցածը, շարունակեց Վէրտուան, կորցրի ձեր սեղանի առաջ: Այլ եւս ոչինչ չ'ունիմ եւ չ'գիտեմ թէ վաղը ուր պէտք է ինձ համար իջեւան գտնեմ եւ ուր յագեցնեմ քաղցս: Զեղ եմ դառնում օգնութիւն խնդրելու. դարձրէք ինձ իմ կորցրած փողերի գոնէ մի տասներորդ մասը, որպէս զի կարողանամ իմ պարապմունքը շարունակել եւ բարձրանալ այս աղքատութիւնից, որի մէջ ընկած եմ:

—Ի՞նչ էք ասում, պարո՞ն Վէրտուա, ասաց Մէնարը, միթէ չը գիտէք, որ բանկ բացանողը երբէք չի դարձնում իւր տարած փողերը: Դա բոլորովին հիմնական կանոններին հակառակ կը լինէր, որոնց ես երբէք չեմ փոփոխում:

—Դուք ճշմարիտ էք, ասպետ, շարունակեց Վէրտուան, ես գիտեմ որ իմ պահանջը յիմար է եւ միեւնոյն ժամանակ չափազանց: Տասներորդ մասը...ոչ, ոչ, քսաներորդը. տուէք ինձ մի քսաներորդ մասը, խնդրում եմ ձեզ յանուն ամէնայն սրբոց:

«Ես արգէն ասացի, որ իմ տարած փողերը յետ չեմ դարձնում», եղաւ պատասխանը:

Այդպէս է այդպէս, մըմնջաց Վէրտուան աւելի գունաթափուելով եւ աւելի մուայլ կերպարանք ստանալով. գուք ինձ մի բան տալու իրաւունք չ'ունիք. անցեալ ժամանակներում ես էլ այդպէս էի վարդում։ Բայց ամէն մարդ աղքատին ողորմութիւն տալ կարող է, ուրեմն տուէք ինձ գոնէ այս օրուայ ձեր կոյր բաղդով տարած փողերից հարիւր լուիդոր։

Բայց գուք Խշտք դ ինձ ձանձրացնէք, սինեօր Վէրտուա, բարկութեամբ պատասխանեց Մէնարը, ես ձեզ ոչ թէ հարիւր, յիսուն՝ քսան, այլ մի լուիդոր անգամ չեմ տալ. չեմ տալ, որովհետեւ ես այնքան յիմար չեմ, որ ձեր ձանձրալի արհեստը շարունակելու համար ձեզ միջոց տամ։ Բաղդը ձեղ թունաւոր ճիմուի նման ճնշել է եւ իհարկէ, ես ձեզ չեմ փրկիլ։ Գնացէ՛ք կախուեցէ՛ք, որովհետեւ գուք նորան էք արժանի։

Վէրտուան երկու ձեռքերով ծածկելով դէմքը միայն կարողացաւ ծանր կերպով հառաջել։

Մէնարը հրամայեց ծառային արկղիկը տանել կառքը եւ յետոյ գառնալով ծերին

ասաց. «Ե՞րբ էք կամենում յանձնել ինձ ձեր տունը եւ կայքը»։

Վէրտուան այս լսելով ուղղուեցաւ եւ հաստատուն ձայնով պատասխանեց. «Այս բոպէիս, ասպէտ, չէ՞ք կամենալ արդեօք գալ ինձ յետ միասին»։

— Լաւ, ասաց Մէնարը, մենք միասին կարող ենք գնալ մինչեւ ձեր տունը, բայց խնդրում եմ մինչեւ վաղ առաւօտ դատարկած լինի։ Բոլոր ճանապարհին ոչ մէկը եւ ոչ միւսը մի խօսք անդամ չարտասանեցին։ Հասնելով Սէնտ—Օնէրօ փողոցը եւ տան գուռը, Վէրտուան զանգահարեց։ Մի պառակ կին բաց արաւ գուռը եւ տեսնելով Վէրտուային, ուրախութեամբ բացականչեց. «Փառք Աստուծոյ որ գուք, սինեօր Վէրտուա, վերջապէս վերադարձաք, թէ չէ Անժելան անհանգստութիւնից շատ էր նեղանում»։

— Լովիր, գոչեց Վէրտուան, Աստուծած տար որ Անժելան չ'իմանար իմ զանգի ձայնը. նա չը պէտք է իմանայ որ ես դարձել եմ։ Եւ այս խօսքերով նա խեց զարմացած պառաւի ձեռքից ճրագը եւ լուսաւորեց Մէնարի ճանապարհը, որ ներս էր մտնում տուն։

— Ես վճռել եմ ամէն բան անել,

ասպետ, ասաց Աէրտուան եւ սկսեց այսպէս. դուք ինձ ատում եւ արհամարում էք, իմ դժբաղդութիւնը ձեզ համար ուրախութիւն է, բայց դուք դեռ եւս չը գիտէք թէ ո՞վ եմ ես: Առաջ ես էլ ձեզ պէս խաղամոլ էի եւ նոյնպէս օգտվում էի մի անբնական բաղդով: Իմ փողով ճանապարհորդեցի ամբողջ Եւրոպայի կէսը, ամէն տեղ ուր կարողացայ՝ խաղատներ բաց արի եւ ամէն տեղ էլ փողը գետի պէս թափվում էր իմ ձեռքերը: —ինչպէս այժմ ձեր ձեռքերի մէջ են թափվում: Ես ունէի մի բարի եւ հաւատարիմ կին, որին խաղի պատճառով մոռացել էի եւ, չը նայելով իմ բոլոր հարստութեան, պահում էի ամենաաղքատ վիճակի մէջ:

Մի անգամ ձենովայում իմ խաղատունը եկաւ մի հռովմայեցի երիտասարդ եւ իւր բոլոր ունեցած չունեցածը տանուլ տուեց: —ինչպէս ես արեցի այսօր: Ինձ նըման արտասուքը աչքերին ինդրեց տալ իրան գոնէ այն չնշին գումարը, որ անհրաժեշտ էր նորան Հռովմ վերադառնալու համար: Ես մի արհամարական ծիծաղով մերժեցի եւ նա իսկոյն յուսահատուած խրեց իմ կրծքի մէջ դաշոյնը, որ միշտ ման էր

ածում իւր հետ: Բժիշկները շատ դժուարութեամբ կարողացան ինձ առողջացնել, բայց հիւանդութեան հետքը դեռ երկար ժամանակ մնում էր: Այն ժամանակ իմ կենը հանդիսացաւ իբրեւ մի բարի հրեշտակ: Այս որպիսի անձնութրութեամբ նա հսկում էր իմ վերայ: Ինչպէս միսիթարում էր ինձ եւ ինչպէս էր թեթեւացնում իմ տանջանքները՝ մասնակից լինելով իմ տառապանքներին. այն ժամանակ մի տեսակ նոր, մինչեւ այն օրը անյայտ զգացմունք բուն դրեց իմ հոգու մէջ:

Մենք խաղացողներս զրկուած ենք մարդկային բոլոր զգացմունքներից, եւ այդ պատճառով զարմանալի չէ, որ ես չէի հասկանում, թէ ի՞նչ է նշանակում սիրել եւ նուիրել իւր անձը սիրած կնոջ: Ամենախոր զղջում պատում էր իմ հոգին, երբ մնածում էի թէ ինչպիսի անարդար եւ անարժան ամուսին էի իմ կնոջ համար եւ ինչպիսի յանցաւոր կրքի զոհեցի նորան:

Այն դժբաղդ հոգիները, որոնք սպանուեցան իմ խիստ եւ ամօթալի անտարբերութեամբ, մի խումբ ուրուականների նման վերկացան իմ դէմ եւ վրէժ էին պահանջում: Ես անդադար լսում էի նոցա գերեզ-

մանական ձայները, որոնք կշտամբում էին  
ինձ իմ յանցանաց համար եւ դատապար-  
տում ամէն գժբաղդութեանց, որովհետեւ  
նոյա տները քանդուած էին իմ ձեռքերով:  
Այսպիսի զարհուրելի բոպէներում միայն  
իմ կինն էր կարողանում մխիթարել ինձ:  
Ես անքակտելի երգում տուի, որ այլեւս  
ձեռքս խաղաթուղթ չ'առնեմ: Երջնականա-  
պէս խղեցի իմ կապը խաղամոլների ընկերու-  
թիւնից եւ հաստատապէս պահպանեցի ինձ  
այնպիսիների պատրանքներից, որոնք յօրդո-  
րում էին չը թողնել այն գործը, որտեղ բաղդը  
այնպէս յայտնի կերպով յաջողում է ինձ:  
Բոլորովին առողջանալով ես խաղաղ եւ հա-  
մեստ ապրում էի կնոջս հետ քաղաքից  
դուրս մի տան մէջ, որ չուվմին մօտ էր:  
Բայց աւաղ՝ միայն մի տարի կարողացայ  
այդպէս խաղաղ եւ բաղդաւոր ապրել, որ  
առաջ երեւակայել անդամ չէի կարող: Կինս  
վախճանուեցաւ որդեննութեան ժամանակ՝  
ընծայելով ինձ մի աղջիկ: Իմ յուսահա-  
տութեան չափ չը կար: Ես անիծում էի ճա-  
կատագրին, ինքս ինձ, իմ անցեալ զազրա-  
լի կեանքը, որից յետոյ ինձ պատահած  
գժբաղդութեան մէջ պարզ տեսնում էի  
արդարադատ Աստուծոյ պատիմքը. նա խլեց

ինձանից նորան, որ փրկեց ինձ եւ որ բո-  
լոր կեանքիս մէջ միակ մխիթարիչս էր:  
Յանցաւորի նման երկիւղ կրելով պատ-  
ժից, ես փախայ իմ տնից եւ աղջկանս  
հետ միասին գնացի Փարիզ այնտեղ բնա-  
կուելու համար: Անժելան մեծանալով ներ-  
կայացնում էր իւր մօր կենդանի պատկերը,  
եւ ես այն բոպէից սկսեցի ապրել միայն նո-  
րա համար՝ բոլոր կարողացածիս չափ աշ-  
խատելով պահպանել ոչ միայն իմ մեծ կարո-  
ղութիւնը, այլ աւելի եւս շատացնել նորան:  
Ճշմարիտ է, ես ուրիշներին փող էի տա-  
լիս մեծ տոկոսներով, բայց վաշխառութեան  
մէջ ինձ իգուր են մեղագրում... եւ ովքեր  
են այդ մեղագրողները— թեթեւամիտ մար-  
գեկի, որոնք գանակը կոկորդիս գնելով շռայ-  
լութեան համար փող էին պահանջում: Եւ  
յետոյ մեղագրում ինձ, երբ ես շարունակ  
խստութեամբ բարիք էի պահանջում յա-  
նուն աղջկանս, որի ճշմարիտ հոգաբարձու եւ  
խնամատար եմ համարում ինձ:

Նատ ժամանակ չէ, որ մի երիտասարդ  
մարդու մեծ գումար տալով կատարելապէս  
փրկեցի կործանումից եւ անպատուութիւ-  
նից: Ոչ մի խօսքով, կամ նշանով չը մտարե-  
րեցի նորան իւր պարտքը, քանի որ աղքատ

էր. բայց նոր իմացայ թէ իմ պարտառէրը հարուստ ժառանգութիւն է ստացել ուստի եւ պահանջեցի փողերս: Երեւակայեցէք, բարոն, այդ անպիտանը, որ իւր պատութեամբ ինձ էր պարտական, կամեցաւ հրաժարել իւր պարտքից՝ եւ դատարանի միջոցաւ ստիպուած լինելով վճարել իւր պարտքը, համարձակեցաւ իմ երեսին ինձ ժլատ եւ վաշխառու անուանել: Ես կարող էի ձեզ շատ այսպիսի դէպքեր պատմել, որտեղ դուք կը տեսնէիք թէ ինչպէս ես՝ շարունակ գործ ունենալով այդպիսի թեթեւամիտների յետ՝ այսպէս խիստ եւ անողոք դարձայ: Բայց դորա փոխանակ, կասեմ ձեզ, որ շատ անգամ պատահել է ինձ, ընդհակառակն, որբել խեղճերի աղի արտասուքները, եւ շատ անգամ նոցա աղօթքները երեկինք են բարձրացել ինձ եւ իմ Անժելայի համար: Բայց դուք, գիտեմ; իմ խօսքերին չէք հաւատալ՝ նոցա պարծենկոտութիւն համարելով եւ դարձեալ ինձ ոչինչ չէք տալ, որովհետեւ դուք խաղացող էք:

Իսկ ինչ վերաբերումէ իմ վերջին դըքաղդութեան, այստեղ ես համոզուած եմ որ երկինքն է ուղարկել սատանային ինձ այսպէս ստորացնելու, որովհետեւ իմ քայ-

լերին միայն յիմարութիւնը կարող էր առաջնորդել:

Ես լսել էի ձեր բաղդի համբաւը, բարոն, ամէն օր նորանոր լուրեր էին գալիս այս ինչ կամ այն ինչ անբաղդի մասին, որոնք խորտակուել են ձեր խաղասեղանի առաջ: Այն ժամանակ իմ մէջ ծագեցաւ մի միտք, թէ ես իմ խաղի մէջ ունեցած բաղդով, որ միշտ ինձ հաւատարիմէ եղել, նախախնամութիւնից նշանակուած եմ սահման գնելու ձեր խաղին: Այս միտքը, կրկնում եմ: որին միայն յիմարութիւնը կարող էր բաւականութիւն տալ, ոչ գիշեր եւ ոչ ցերեկ մի բոպէ ինձ հանգիստ չէր թողնում: Ուստի ես եկայ ձեզ մօտ այն գիշերը, որ շատ լաւ յիշում եմ, եւ չը դադարեցի խաղալուց մինչեւ այն ժամանակ, երբ իմ եւ Անժելայիս բոլոր ունեցածը ձեր սեպհականութիւն դարձաւ:

Ես վերջացրի: Այժմ դառնում եմ ձեզ խնդրելով, թոյլ կը տաք արդեօք վերցնել գոնէ իմ աղջկայ անհրաժեշտ շորերը:

— Ձեր աղջկայ հանդերձները, ասաց Մէնարը, ինձ հարկաւոր չեն. կարող էք նոյնպէս թողնել ձեզ համար եւ մահմակաները եւ միւս տնտեսական անհրաժեշտ պի-

տոյքները — այդ հնոտիքը ինձ հարկաւոր չեն:  
Բայց զգուշացէ՛ք թագանելուց մի ուրիշ  
որեւիցէ թանկագին բան:

Ծեր Վէրտուան լուռ, ուշի ուշով նա-  
յեց Մէնարին եւ ջերմ արտասուքի հեղեղ-  
ներ թափուեցան նորա աչքերից: Նա յու-  
սահատուած ընկաւ նորա ոտքերը եւ ձեռ-  
քերը սեղմելով իւր կրծքի վերայ՝ աղաղակեց.

— Ասպետ, մի՞թէ ձեր սրտի մէջ բո-  
լորովին. մարդկային զգացմունք չը կայ,  
խղճացէ՛ք, մտածեցէ՛ք, որ դուք սպանում  
էք ոչ թէ ինձ, այլ իմ խեղճ, բոլորովին  
անմեղ Անժելային. գթացէ՛ք նորա վերայ,  
դարձրէ՛ք իրան իւր ունեցածի գոնէ մի քա-  
ներորդ մասը: Ո՛չ, ես զգումեմ... դուք կը  
խղճաք... Անժելա Անժելա, աղջիկս...

Եւ նա լալով ու չեկեկալով շարունա-  
կումէր կրկնել իւր աղջկայ անունը:

— Վէրջապէս այս յիմար թատրոնական  
տեսարանը սկսումէ ինձ ձանձրացնել, ան-  
տարբերութեամբ ասաց Մէնարը:

Յանկարծ սենեակի դուռը բարձր ձայ-  
նով բացուեցաւ եւ գեղեցիկ աղջիկը գի-  
շերային սպիտակ հագուստով, մազերն ար-  
ձակ եւ գունաթափուած՝ արագութեամբ  
ներս վագելով սենեակը՝ ընկաւ ծերի պարա-

նոցը եւ ճչալով գրկեց նորան: «Հայր իմ:  
սիրելի հայր, ես բոլորը լսեցի, ես բոլորը  
գիտեմ: դու ասում ես թէ ամէն բան կորց-  
րիր, բայց մի՞թէ քո Անժելան չի մնացել  
քեզ համար: Ինչերո՞ւս է հարկաւոր փողը  
եւ հարստութիւնը. Անժելան իւր մատնե-  
րի աշխատանքով կը պահպանի քեզ. իւրնդ-  
րում եմ հայր, մի ստորանալ այս գարշե-  
լի մարդու առաջ. մենք խեղճ եւ անբաղդ-  
չենք, այլ ընդհակառակն նա իւր բոլոր հա-  
րստութեամբ, որովհետեւ նա միայնակ է,  
եւ բոլոր երկրիս երեսին չի գտնիլ մի սիրող  
սիրտ, որ սեղմելով իւր կրծքին՝ սփոփէր  
նորան իւր կեանքի յուսահատ բոպէնե-  
րում: Գնանք, հայր, իսկոյն եւ եթ թող-  
նենք այս տունը, որպէս զի մեր վշտով ա-  
ռիթ ըլ տանք այս հրէշին զուարձանալու:

Վէրտուան թուլացած ընկաւ բաղկա-  
թոսի վերայ: Անժելան չոքեց նորա առաջ,  
բռնեց նորա ձեռքերը, համբուրեց նոցա եւ  
սկսեց մի առ մի թուել այն բոլորը, ինչ որ գի-  
տէրեւ ինչքանի մէջ ընդունակութիւն ունէր,  
որոնցով կարող էր աշխատել եւ ապրել հօր  
հետ աւելի բաւականութեան մէջ, քան թէ  
են այժմ Զերմ արտասուք թափելով խընդ-  
րումէր չը յուսահատուել եւ մոռանալ իւր

վիշտը, հաւատացնելով որ աշխատել՝ կարել՝ կիթար ածել եւ երգել հօր համար, իւր կատարեալ եւ ամենամեծ ուրախութիւնը կը լինի կեանքի մէջ:

Ամենամեծ չարագործն անգամ չէր կարող անտարբեր կերպով նայել այս գեղեցիկ աղջկայ վերայ, երբ լսէր թէ նա ինչպէս է միխթարում հօրը իւր քնքոյշ ձայնով եւ քաղցր խօսքերով, որոնց մէջ երեսում էին նորա անսահման սէրը եւ որդեական անձնուիրութիւնը:

Եւ յիրաւի, Մէնարը անզգայ մնալ ըլ կարողացաւ: Խիզճը ամենայն սաստկութեամբ տանջում էր նորան. նորա հոգու մէջ բարձրացած էր դժոխային չարչարանքների մի ամբողջ կարգ: Անժելան երեւում էր նորան ինչպէս Աստուածանից ուղարկած մի գատապարող հրեշտակ, որի առաջ՝ մութ մառախուզի նման՝ անհետանում էր նորա անմիտ կուրութիւնը, եւ նա զարհուրելի մերկութեան մէջ տեսնում էր, յիրաւի, իւր միայնակ եւ անմիխթար դրութիւնը այս աշխարհում:

Եւ այժմ, երբ նորա հոգին շրջապատող մառախուզը յանկարծ փայլեց պայծառ լուսաւոր ճառագայթներով, որ ցոյց

էին տալիս մինչեւ այն ժամանակ նորան ան ծանօթ երկնային երանութեան եւ բաղդգոյութիւնը, զգացած հոգեկան տանջանքը կրկնապատիկ աւելի զարհուրելի եւ տանջողական էր երեւում:

Մէնարը երբէք չէր սիրել: Տեսնելով Անժելային՝ նազգաց իրան շրջապատած ամենաջերմ սիրով, որ երջանկութեան փոխանակ միայն վիշտ էր ուղարկում մանաւանդ, երբ մտածում էր իւր անյուտալի վիճակի վերայ: Եւ յիրաւի, մի՞թէ մարդ կարող է յուսալ այն բաղդին, որ սկսում է ծանօթանալ սիրելի առարկաների հետ այնպիսի հանգամանքներով, ինչ հանգամանքներով անթւմ էր Մէնարը:

Մէնարը մի բան կամենում էր ասել, բայց նորա խօսքերը անլսելի էին մնում: Կարծես թէ զրկուած էր լեզուից: Վերջապէս դժուարութեամբ՝ վերջին ոյժը ժողովելով ասաց դողդողուն ձայնով:

— Սինեօր Վէրտուա, ես ձեզանից ոչինչ չեմ տարել. ահա իմ արկղը. այն ձեզ է պատկանում: Եւ բացի դորանից... Ո՛չ, ո՛չ, ես գեռ ձեզ պարտական եմ: վերցրէք, վերցրէք այն»:

«Որդեակ», կամենում էր խօսել Վէր-

տուան, բայց Անժելան արագութեամբ վեր թոշելով մօտեցաւ Մէնարին եւ հպարտութեամբ նայելով նորա վերայ ասաց կցկտուք ձայնով. «Ասպետ, իմացէք, որ կայ մի գանձ, որ ոսկուց եւ արծաթից աւելի թանգ է. այս այն, ձեր զգացմունքից բոլորովին հեռու գանձն է, որ ստիպումէ մեղ արհամարանքով հրաժարուիլ ձեր տուած պարգեւից, եւ միեւնոյն ժամանակ պահպանել մեր հոգեկան բաւականութիւնը եւ հանգստութիւնը: Ուրեմն պահեցէք ձեզ համար ձեր փողերը, որոնց վերայ ծանրանումեն ամէն տեղ ձեզ հետեւող անէծքները, որոնց պատճառը դուք էք անազնիւ եւ անսիրտ խաղաղուց:

— Այս, աղաղակեց Մէնարը սաստիկ յուղուած եւ վայրենաբար նայելով իւր շուրջը, դուք ճշմարիտ էք. թո՛ղ ես անիծուած լինիմ եւ դատապարտուած յաւիտենական տանջանքների, եթէ գարձեալ գոնէ մի անգամ կեանքիս մէջ՝ մօտենամ խաղաթղթերին: Բայց եթէ դուք, Անժելա, կը հեռացնէք ինձ ձեզանից եւ այս երդումից յետոյ, այն ժամանակ իմ մահուան միակ պատճառը դուք կը լինէք: Ո՞չ, դուք ինձ դեռչէք ճանաչում ուստի կարող էք անխելք էլ անուանել, բայց ի՞նչ

կասէք, եթէ տեսնէք ինձ վիրաւորուած ընկած ձեր ստքերի առաջ: Այժմ ինդիրը կեանքի եւ մահուան վերայ է: Մնաք բարեաւ:

Այս առելով Մէնարը յուսահատուած դուրս վազեց սենեակից: Վէրտուան իսկոյն հասկացաւ թէ բանը ինչումն է, ուստի կամեցաւ բացատրել Անժելային այն հանգամանքները, որոնք կարող էին առաջ գալ Մէնարի տուած նուէրի չընդունելուց: Անժելան իւր հօր այս խօսքերից վախեցաւ եւ ուղղակի յայտնեց, որ իւր կարծիքով Մէնարը ոչ մի բանի արժանի չէ, եթէ ոչ արհամարանքի: Առաջ նախախնամութիւնը ինքնիշխան կառաջարելով մարդուս հոգին եւ մարմինը շնոր անդամ նոցա սեպհական կամքի հակառակական գործը այնպէս է կարգադրում, որ անսպասելին եւ անդուշակելին իրականութիւն է ստանում:

Մէնարին այնպէս էր թւում: իբր թէ յանկարծ զարթնել է զարհուրելի իրազներից, որի մէջ տեսնումէր իրան ընկած մի սարսափելի անդունդի ափին, որտեղից զգուշութեամբ ձգումէր ձեռքը դէպի մի գեղեցիկ լուսաւոր առարկայ, որ երեւումէր հեռուում: ոչ թէ իրան փրկելու համար, այլ

ընդհակառակն, իմացնելու նորան իւր կործանումը:

Նուտով, մեծ զարմանք պատճառելով ամբողջ Փարիզին: Մէնարի բանկը ոչնչացաւ: Խնդը ոչ մի տեղ այլ եւս չ'երւեցաւ. այնպէս որ, նորա այդ կերպով յանկարծակի անյայտանալու մասին, ժողովրդի մէջ սկսեցին անչաւատալի լուրեր պըտըտիլ: Մէնարը, որ իւր անբաղդ սիրահարութեան պատճառով կատարեալ յուսահատութեան էր հասել, ամէնքից փախչումէր. նա միայն մտածումէր Անժելայի վերայ. եւ աշա յանկարծ, երբ մի անգամ միայնակ զբօսնումէր Մալմէզօնի այգիում դէմ յանդիման պատահեցաւ ծեր Վէրտուային իւր աղջկայ հետ: Անժելան, որ այլապէս չէր կարող երեւակայել Մէնարին, բայց միայն անզուսպ բարկութեան եւ սաստիկ արհամարանքի ենթարկուած, այս անգամ զարմացած էր տեսնելով նորան այնպէս շփոթուած եւ գունաթափուած, որ ճնշուած լինելով ներքին խռովութիւնից չէր համարձակվում նայել իւր վերայ: Անժելան գիտէր, որ Մէնարը բոլորովին թողել է խաղը սկսած այն ապաբաղդ գիշերուանից, երբ իրանց տանն էր. եւ այժմ այն միտքը, թէ այդ բոլորը

ինքն է արել, ակամայ փայլեց նորա ուղեղի մէջ: Նա պարզ տեսնումէր, որ ազատել է նորան կործանումից... բայց կայ մի թէ մի ուրիշ բան, որ կարողանայ աւելի շողոքորթել կնոջ ինքնասիրութիւնը:

Ամենեւին զարմանալի չէր, այն որ, երբ Մէնարը եւ Վէրտուան փոխադարձաբար առաջին բարեւը տուին միմեանց, Անժելան այս նոր զգացողութեան տպաւորութեան տակ քաղցրութեամբ հարցրեց.— «Ի՞նչ է պատահել ձեզ, Մէնար ասպետ. չ'իցէ՞ դուք հիւանդ էք. լաւ կանէք, եթէ բժշկից խորհուրդ հարցնէք»:

Կարելի է երեւակայել, թէ ինչպիսի բացը յուսոյ ճառագայթներով այս խօսքերը թափանցեցին Մէնարի սիրտը: Նա մի վայրկեանի մէջ վերածնուեցաւ եւ բարձրացնելով գլուխը զգաց, որ իւր լեզուն նորից սեպհականել է խօսելու եւ գրաւելու ընդունակութիւնը, որով առաջ ձեռք էր բերում ամէնքի սէրը եւ համակրութիւնը: Ի միջի այլոց Վէրտուան հարցրեց, թէ ե՞րբ է կամենում նա ստանալ իւր տարած տունը:

— Այո՛ սինեօր Վէրտուա, այո՛, քաջալերուելով գոչեց Մէնարը, ժամանակ է արդէն դորանով զբաղուելու: Վաղը ես կը գամ

ձեզ մօտ եւ մենք կ'աշխատենք մի քանի  
խօսքով վերջացնել բանը:

—Թող այդպէս լինի, ասպէտ, պատառ-  
խանեց Վէրտուան ժամալով, թէ եւ ինձ  
այնպէս է թւում, որ մենք այդ խօսակցու-  
թիւնը մինչեւ այն տեղը կը հասցնենք, որի  
մասին այս ըոպէիս շատ կարելի է չենք էլ  
մտածում:

Հեշտ է երեւակայել, թէ Մէնարը այդ-  
հանդիպած ըոպէին ինչպէս կենդանացաւ  
եւ թէ ինչպէս նորից վերադարձաւ նորա  
ամենաքաղցր ուրախութիւնը, որ մինչ այն  
աստիճան ճնշուած էր նորա ստոր ցանկու-  
թեանց տակ: Այսուհետեւ նա սկսեց յա-  
ճախ այցելել ծեր Վէրտուայի տունը եւ ա-  
մէն օր աւելի եւ աւելի նորա հետ կապվում էր  
իւր փրկիչը—Անժելան. այնպէս որ սա վեր-  
ջը զգաց որ սիրում է նորան, եւ ՚ի սրտէ  
ցանկանալով՝ համաձայնեցաւ նորա առա-  
ջարկութեան համեմատ տալ նորան իւր ձեռ-  
քը: Ծեր Վէրտուան այս բանով շատ ուրախ  
էր, որովհետեւ այս ամուսնութեան մէջ տես-  
նում էր ամենայարմար միջոցը, որով բոլորո-  
վին վերջ կը տրուի իւր Մէնարի հետ ունե-  
ցած գործին:

Մի անգամ Անժելան, երբ սա արդէն

Մէնարի երջանիկ նշանածն էր, նստած էր  
պատուհանի առաջ՝ լցուած իւր երջանկու-  
թեան գեղեցիկ մոտածմունքներով, յանկարծ  
փողոցից լսելի եղաւ մի ուրախ զինւորա-  
կան երգ եւ փոքր ինչ յետոյ երեւեցաւ զօ-  
րաց գունդը, որ գնում էր Խոպանեա: Ան-  
ժելան նայում էր այն քաջերին, որոնք գը-  
նում էին դէպի մահը, եւ ահա յանկարծ մի  
երիտասարդ սպայ կարգից շեղուելով քշեց  
իւր ձին ուղիղ դէպի նորա պատուհանը:  
Անժելան հազիւ թէ նորան տեսաւ՝ բարձրա-  
ծայն ճիչ արձակեց եւ անզգայ ընկաւ բազ-  
կաթոռի վերայ:

Զիաւորը, որ նորա վերայ այնպէս մեծ  
տպաւորութիւն արաւ, երիտասարդ Դիւվէր-  
նէն էր՝ նորա հօր հարեւանի որդին՝ իւր  
մանկութեան ընկերը, որի հետ անց էր  
կացրել իւր կեանքի ամենաերջանիկ տարի-  
ները եւ որին մոռացել էր միայն այն վերջին  
ժամանակները—Մէնարի հետ ծանօթանա-  
լուց յետոյ:

Երիտասարդ մարդու յանդիմանու-  
թեամբ լի հայեացքի մէջ, որ արտայայտում  
էր նորա ներքին տանջանքը, Անժելան առա-  
ջին անգամից պարզ կարդաց ոչ միայն այն,  
թէ նա մինչեւ ո՞ր աստիճան սիրում էր ի-

րան, այլ թէ ո՞րպիսի անբացատրելի սիրով փոխադարձաբար ինքն էր սիրում նորան։ Մի ակնթարթի մէջ նա հասկացաւ, որ իւր ունեցած կապակցութիւնը Մէնարի հետ միայն վայրկենական յափշտակութիւն էր։ Դիւվէրնէի անցեալ հառաջանքները՝ երբ նոքա երկուսը միայնակ էին մնում, լուռ հայեացքը՝ որոնց վերայ մեծ ուշագրութիւն չէր դարձնում—այժմ յանկարծ նորա ազքերում նշանակութիւն ստացան, եւ առաջին անգամ հասկացաւ, թէ ո՞րպիսի զգացմունք ալեկոծեց իւր կուրծքը, երբ տեսաւ Դիւվէրնէին, կամ լաւ է ասել լսեց նորա ձայնը։

—Ուշէ...նա կորած է ինձ համար, ասաց Անժելան եւ կատարեալ հաստատակամութեամբ ստիպեց իրան ճնշել անպայման իւր սրտի մէջ յառաջացած այս զգացմունքը։

Մէնարի սուր տեսողութիւնից չէր կարող ծածկուել այն, որ իւր Անժելան մի պատճառից շփոթուած է։ Բայց նա այնքան ազնիւ եղաւ, որ չը հետաքրքրուեց գաղտնիքը իմանալու որ, ինչպէս երեւում էր, Անժելան կամենում էր նորանից ծածկել։ Նա միայն խնդրեց շտապեցնել պսակը, որ

կարգադրած էր ամենանուրբ ճաշակով եւ Անժելայի ցանկութեան համեմատ. եւ այս միայն վերականգնեց նորա սէրը եւ համակրութիւնը դէպի իւր ամուսինը։

Առհասարակ Մէնարը իւր ճշմարիտ սիրոյ վերաբերութեամբ իրան այնպէս զգոյշ էր պահում եւ մինչ այն աստիճան աշխատում էր ամէն բանի մէջ յամարիլ նորան, որ Անժելայի մէջ յանկարծակի զարթնած յիշողութիւնը Դիւվէրնէի մասին ինքն իրան մոռացութեան տրուեցաւ։ Բայց նորա երջանիկ կեանքը յանկարծ մոռայլեցաւ։ Ծեր Վէրտուան անակնկալ կերպով հիւանդացաւ եւ մի քանի օրից յետոյ վախճանուեցաւ։

Այն գիշերուանից սկսած՝ երբ իւր ունեցած չունեցածը տանուլ տուեց Մէնարին, նա իւր ձեռքը այլ եւս խաղաթուղթ չէր վերցրել, բայց կեանքի վերջին օրերում կործանիչ սէրը կարծես թէ նորից բորբոքուեցաւ նորա հոգու մէջ։ Երբ որ հրաւիրած քահանան եկաւ նորան խոստովանեցնելու եւ պատմում էր երկնքի մասին, Վէրտուան աչքերը խուփ պառկած հանդարտութեամբ մրմնջում էր.—perd—gagnoe—միեւնոյն ժամանակ թուլացած ձեռքերով ցնցողական շար-

ժումներ էր անում կարծես թէ խառնում  
եւ բաժանումէր թղթերը։ Իզուր Մէնարը  
եւ Անժելան նստած նորա մօտ ամենայն  
կերպով աշխատումէին զարթեցնել նորա  
ուշագրութիւնը։ Նա ոչինչ չէր լսում; ոչ  
ոքի չէր ճանաչում եւ մինչեւ անդամ մե-  
նաւ—ցացու շխօսքը շրթունքներին։

Ի հարկէ, այդպիսի մահը դեռ երկար  
ժամանակ չէր կարող ըստ թողնել Անժելայի  
հոգու մէջ իւր սոսկալի եւ աղջու տը-  
պաւորութիւնը։ Այն զարհուրելի գիշե-  
րուայ պատկերը, երբ առաջին անդամ տե-  
սաւ իւր ամուսնուն անսիրտ խաղամոլի  
կերպարանքով, նորից կենդանացաւ նորա  
մտքի մէջ, եւ այն սարսափելի միտքը, թէ  
կարող է այնպէս պատաշէլ, որ Մէնարը  
յանկարծ ձգելով իրանց բարեգործի կեղծ  
դիմակը, գարձեալ առաջուայ դեւը դառ-  
նայ եւ սկսի շարունակել իւր նախկին ա-  
ւերիչ կեաեքը, ստիպեց նորան գիշեր եւ ցե-  
րեկ հետեւել Մէնարին։

Դժբաղդաբար Անժելայի զարհուրելի  
մտածմունքները արդարացան։

Ոքան էլ Մէնարը վրդովուած լինէր  
Վէլտուայի մահուամբ եւ հրաժարուած ա-  
ռաջուայ մեղսալից կեանքից, մինչեւ անդամ-

կրօնի մխիթարութիւնից, այնուամենայնիւ  
այս մահը—նա ինքն էլ չիմացաւ թէ ինչ-  
պէս—զարթեցրեց իւր մէջ կրկին խաղալու  
միտքը՝ այն էլ աւելի խիստ առաջուանից։ Ամէն  
գիշեր նա տեսնումէր երազի մէջ, թէ ին-  
քը գարձեալ նստած է խաղասեղանի առաջ  
եւ տանումէ ոսկու նորանոր կոյտեր։

Ինչպէս որ Անժելայի սրտի մէջ աւելի եւ  
աւելի նորոգվումէր իւր առաջին ծանօթու-  
թեան պատկերը Մէնարի հետ, որից յետոյ  
առաջին փոխադարձ փայփայանքների մէջ  
կորաւ նոցա առ միմեանս ունեցած անկեղծ  
սէրը, բոլորովին դորա նման էլ Մէնարը  
կասկածու եւ անհաւատարիմ գարձաւ դէ-  
պի իւր կինը՝ նորա մէջ եղած փոփոխու-  
թիւնը համարելով վրդովուած Անժելայի  
այն գաղտնիքը, որ իւր համար անբացա-  
տրելի մնաց։ Կասկածանքը շուտով փոխուե-  
ցաւ անբաւականութեան, որ ըստ իւր կար-  
գին զարթեցրեց մի ամբողջ շարք ընտանե-  
կան երկպառակութեանց, որոնք սաստիկ  
վիրաւորումէին Անժելային։ Այս յաճախ  
կրկնուող անհամաձայնութեաց ժամանակ  
նորա հոգու մէջ նորից սկսեց պատկերանալ  
անբաղդ Դիւլէրնէի պատկերը եւ դորա հետ  
՚ի միասին իւր յաւիտեան աւերուած սիրոյ

անմիշիթար զգացմունքը, որ առաջին անգամ լուսաւորեց իւր երիտասարդ, դեռ նոր բացուող սիրտը։ Այն սահմանը, որ բաժանումէր երկու ամուսիններին, աւելի եւ աւելի մեծանումէր, այնպէս որ, վերջապէս Մէնարը չը կարողանալով համբերել, բոլորովին թողեց խաղաղ ընտանեկան կեանքը եւ առաջուայ նման անձնատուր եղաւ աշխարհային բաւականութեանց։

Մէնարի չար աստղը նորից փայլեց։ Այն՝ որին ընդդիմանումէր ներքին զգացմունքը, աւարտումէր մի վատ մարդու ազդեցութիւն, որ առաջ Մէնարի բանկի մէջ պաշտօն ունէր։ Նորա զրպարտութիւնները եւ ծաղրածութիւնները մինչ այն տեղը հասցրին, որ Մէնարը վերջապէս սկսեց զարմանալ, թէ ինչպէս էր ինքն իրան դատապարտել այնպիսի խուլ երեխայական կեանքի եւ չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարելի է կնոջ համար թողնել աշխարհս իւր բաւականութիւններով, որոնց լիովին իրան նուիրած էր համարում։

Բանը վերջացաւ նորանով, որ Մէնարի հարուստ բանկը շուտով բացուեցաւ—այն եւս աւելի փայլուն քան թէ առաջ։ Բաղդը ընկերակցում էր նորան ինչպէս միշտ։ Թուղթ

խաղացողները առաջուայ նման խմբուեցան ՚ի միասին եւ փողը գետի պէս թափվումէր նորա դրամարկզը։ Բայց դորա փոխանակ, Անժելայի երջանկութիւնը անյայտանումէր երազի նման։ Մէնարը դէպի նա շատ անտարբեր էր, որ աւելի արհամարանքի նմանութիւն ունէր. յաճախ կինը շաբաթներով եւ ամիսներով չէր տեսնում իւր ամուսնուն։ Մի ծեր սպասաւոր ինչպէս եւ իցէ կառավարումէր տունը, իսկ միւս ծառաները Մէնարի կամայականութեան պատճառով արտաքսուած էին, այնպէս որ անժելան յաճախ իրան օտար էր համարում իւր սեպհական տան մէջ։ Նատ անգամ անքուն գիշերները նա լսումէր ինչպէս Մէնարի կառքը կանգնեց դրան առաջ, ինչպէս նորա միջից դուրս բերեցին ծանր արկզները, ինչպէս Մէնարը կցկտուր ձայնով հրամաններ էր տալիս, ինչպէս յետոյ ծանր եւ ճռնչալով կողպիւմէին առանձնասենեակի դռները։ Դառն արտասուքները հեղեղի՝ պէս թափվումէին իւրեղմ կնոջ աչքերից եւ սիրտը հարիւր անգամ կրկնումէր Դիւլէրնէի անունը, միեւնոյն ժամանակ խնդրելով Աստուածանից վերջ տալ իւր գժբաղդ, խորտակուած կեանքին։

Մի անգամ լաւ ընտանիքից մի երիտասարդ Մէնարի սեղանի առաջ տանուլ տալով իւր բոլոր ունեցածը, հէնց այնտեղ՝ ամէնքի առաջ անձնասպանութիւն գործեց, այնպէս որ նորա արիւնը եւ ուղեղը մեծ սարսափ ձգեցին փախչող խաղացողների վերայ: Միայն Մէնարն էր կանգնած անվրդով եւ մինչեւ անգամ սառնութեամբ հարցրեց փախչելու շտապողներին: — «ը լինի թէ այս յիմարի փարմունքի պատճառը եղել է այն, որ այլեւս չը կարողանալով շարունակել, կամեցել է ժամանակից առաջ վերջացնել խաղը»:

Սակայն այս դէպքը մեծ ազմուկ հանեց: Մինչեւ անգամ ամենանշանաւոր խաղացողները գրգռուած էին Մէնարի անսիրտ փարմունքի դէմ: Ամէնքը վեր կացան նորա դէմ: Ոստիկանութիւնը կողպեց նորա բանկը: Բացի գորանից նորան մեղադրում էին եւ մի խաբերայութեան մէջ, որին, 'ի միջի այլոց, դատաւորի կարծիքով, օգնել է իւր անսովոր բաղդը: Մէնարը չը կարողացաւ արդարանալ եւ մեծ տուգանքի ենթարկուելով զրկուեցաւ իւր գոյքի մի նշանաւոր մասից: Այժմ նա իրան տեսնում էր ստորացած եւ ամէնքից անպատուած: Այն ժամանակ նա

կրկին դարձաւ դէպի իւր արհամարուած կինը որ իւր կողմից մեծ ուրախութեամբ ընդունեց դժբաղդ եւ զղջացած մարդուն, յիշելով հօր օրինակը, որ նոյնպէս ծերութեան ժամանակ թողեց թուղթ խտղացողի յանդուգն կեանքը: Անժելան չը մերժեց նորան, յուսալով որ այս անգամ զղջումը արդարացի կը լինի, որովհետեւ Մէնարը արդէն մօտեցել էր իւր հասած տարիքին:

Մէնարը թողեց Փարիզը եւ իւր կնոջ շետ տեղափոխուեցաւ ձենովա — Անժելայի ծննդավայրը, ուր մի քանի ժամանակ շատ խաղաղ եւ համեստ կերպով ապրեց: Այլ եւս անկարող էր վերականգնել առաջուայ քաղցը յարաբերութիւնները դէպի իւր կինը, որ խորտակուած էին իւր անձը կտշկանդող գեւի ձեռքերով: Անմիաբանութիւնը եւ անհամաձայնութիւնը երկու ամուսինների մէջ նորից սկսուեցան, որոնք շուտով ստիպեցին Մէնարին դարձեալ տանից դուրս իւր համար զբօսանք եւ բաւականութիւն որոնել: Նորա անուանարկ համբաւը Փարիզից հասաւ ձենովա, այնպէս որ այնտեղ բանկ բացանելը նորա համար անկարելի էր, թէ եւ այդ բանը նա շատ էր ցանկանում:

Այդ ժամանակ ձենովայի ամենահարուստ խաղատունը պատկանում էր մի ֆրանսիացի գնդապետի, որ վէրք ստանալու պատճառով ստիպուած էր թողնել իւր պաշտօնը: Գաղտնի չարութեամբ եւ նախանձով գրգռուած Մէնարը խառնուեցաւ միւս խաղացողների հետ, յուսալով որ իւր սովորական բաղդը կ'օգնի իրան կողոպտելու եւ ոչնչացնելու հակառակորդներին: Գնդապետը իւր սովորութեան հակառակ ժըպտալով բարեւեց Մէնարին եւ ասաց. «Այսօր խաղը մի բանի նման կը լինի, որովհետեւ Մէնարն էլ իւր հոչակուած բաղդով կը խաղայ մեզ հետ, եւ հետեւապէս մրցումն էլ շատ հետաքրքիր կը լինի»:

Սկզբում՝ առաջուայ նման լաւ թղթերը ընկան Մէնարի ձեռքը, բայց յետոյ, երբ բոլորովին վստահ իւր բաղդի վերայ բացականչեց ու ծանրաց անգաւութեամբ. նորա թղթերը ոչնչացն եւ նա մի անգամից կորցրեց մի նշանաւոր գումար:

Գնդապետը, որ մինչեւ այն ժամանակ բոլորովին անտարբեր էր գէպի յաջողութիւնը կամ անյաջողութիւնը, այս անգամ մի առանձին ուրախութեամբ ժողովեց զարմացած Մէնարի փողերը, որի բաղդը կարծես թէ հէնց

այն բոպէին բոլորովին փոխուեցաւ: Նա սկըսեց խաղալ ամէն գիշեր եւ շարունակ տանուլ տալով, վերջապէս կորցրեց իւր բոլոր ունեցածը, բացի մի փոքրիկ գումարից—երկուհազար լուիդոր, որ պահաւած էր նորա թղթերի մէջ:

Ամբողջ օրը նա վազվզում էր, որ այն թղթերը մանրելու համար մի տեղ գտնի եւ միայն ուշ երեկոյեան վերադարձաւ տուն: Այն գիշեր կամենում էր խաղալ այս վերջին լուիդորներով, բայց Անժելան հասկանալով նորա միտքը, արտասուալից աչքերով ընկաւ նորա ոտքերը երդուեցնելով Աստուծոյ եւ բոլոր սրբերի անունով—թողնել այդ սպանիչ գիտաւորութիւնը, որ սպառնում էր նոցա վերջնականապէս գլորել աղքատութեան եւ թշուառութեան անդունդը:

Մէնարը գողալով բարձրացրեց նորան, վշտացած սեղմեց իւր կրծքին եւ ասաց գառնութեամբ. «Անժելա, իմ սիրելի Անժելա, ինչ որ էլ պատահելու լինի, ես պէտք է այս քայլն էլ անեմ այսօր, իսկ վազը քո բոլոր հոգսերը կը վերջանան, որովհետեւ տալիս եմ հանդիսաւոր երդում: որ այս վերջին անգամն եմ գնում խաղալու: Հանգիստ եղի՛ր եւ պառկի՛ր քնելու, Աստուծով

ხრაძე մէջ կը տեսնես լաւ օրեր եւ երջա-  
նիկ կեանք, որ, հաւատացնում եմ, դար-  
ձեալ շուտով կը վերադառնան»:

Այս ասելով նա համբուրեց կնոջը եւ  
արագութեամբ հեռացաւ:

Գալով խաղասենեակը, մի երկու խա-  
ղի մէջ տանուլ տուեց բոլորը եւ սարսա-  
փած լուռ կանգնեց գնդապետի առաջ՝ ուղ-  
ղելով տչքերը կանաչ սեղանին:

—Ի՞նչ է, ասպե՞տ, դուք այլեւս չէք  
խաղում, հարցրեց գնդապետը խառնելով  
թղթերը նոր խաղի համար:

—Ես տանուլ տուի բոլորը՝ պատաս-  
խանեց Մէնարը հանդարտութեամբ:

—Մի՛թէ դուք այլ եւս ոչինչ չ'ունիք,  
շարունակեց գնդապետը:

—Ես աղքատ եմ; աղաղակեց Մէնարը  
կատաղութիւնից դողալով, եւ շարունակ  
նայելով սեղանին. նա չէր նկատել, թէ ինչ-  
պէս բաղդը ակնյայտ կերպով խոնարհուել  
էր միւս խաղացողների կողմը:

Գնդապետը անշփոթ շարունակեց խաղը:  
—Ի՞նչ կայ, դուք դեռ ունիք մի գե-  
ղեցիկ կին, ասաց նա խառնելով թղթերը  
եւ ամենեւին չը նայելով Մէնարի վերայ:

Դորանով ի՞նչ էք կամենում ասել բար-

կութեամբ հարցրեց Մէնարը: Բայց գնդա-  
պետը չը պատասխանեց նորա հարցին եւ  
վերցնելով թղթերը կտրեց, եւ յիտոյ նայե-  
լով Մէնարին ասաց.

—Տասն հազար ոսկի—կամ Անժելան:

—Դուք խելագարուել էք, ի՞նչ է, աղա-  
ղակեց Մէնարը ուշի գալով եւ տեսնելով  
թէ ինչպէս գնդապետը անդադար տանումէ:

—Քսան հազար ոսկի Անժելայի փոխա-  
նակ, հանդարտութեամբ աւելացրեց գնդա-  
պետը դադարեցնելով խառնել թղթերը:

Մէնարը լրեց: Գնդապետը նորից սկսեց  
խաղը, եւ տանուլ տուեց համարեա իւր բո-  
լոր թղթերը:

—Յաջողումէ, մրմնջաց Մէնարը խա-  
ղի սկզբին եւ վայր ձգեց թուղթը:

Նորա թղթերը ոչնչացան:

Ատամները կրճտացնելով՝ նա վեր կացաւ  
իւր տեղից եւ մեռելի նման գունաթափուած  
մօտեցաւ պատուհանին:

Այդ միջոցին խաղը աւարտուեցաւ: —Է,  
ի՞նչ կասէք ձեր պարտքի մասին, ասաց  
գնդապետը մի արհամարական եւ թունա-  
լից ժպիտով:

ԱՇ, բացականչեց Մէնարը բոլորովին ան-  
դիտակցաբար, դուք ինձ աւերեցիք, այդ պարզ

է, բայց երեւակայել, որ տարաք իմ կինը:  
այդ կատարեալ խելագարութիւն կը լինի:  
Մենք կզզիաբնակ վայրենիներ չենք, եւ ոչ  
իմ կինը ստրկուհի, որ անպիտան մարդը  
կարողանար նորան ինչպէս առարկայ տա-  
նուլ տայ: Դուք վստահացաք դնել քսան հա-  
զարուկի, եւ այժմ ես տանուլ տալով կինս  
պէտք է յայտնեմ իրան, որ թողնի ինձ եւ  
հետեւի ձեզ... եթէ միայն նա այդ բանին  
համաձայն կը լինի: Գնանք մեր տուն եւ  
տեսնենք թէ նա ինչպէս կը կարողանայ  
հրաժարուի ձեր սիրուհին լինելու առա-  
ջարկութիւնից:

Զգուշացէք, ասպետ, արհամարանօք  
ծիծալելով պատասխանեց գնդապետը, նա-  
յեցէք, որ ձեր կինը չը մերժի հենց ձեզ,  
ինչպէս անպիտան մարդու, որ գլորել է նո-  
րան աղքատութեան եւ դժբաղսութեան  
մէջ եւ ուրախութեամբ ու ցնծութեամբ  
չ'ընկնի իմ գիրկը: Աստահ եղէք, որ նորան  
կը տեսնէք ոչ որպէս իմ սիրուհի, այլ ինչ-  
պէս կին, միաւորուած ինձ հետ եկեղեցու  
սուրբ կերպերով: Դուք ինձ անմիտ էք անուա-  
նում: բայց իմացէք, որ եթէ ես խաղացի  
գրաւ դնելով ձեր կինը, այդ միայն այն պատ-  
ճառով: որ իրաւոնք ունենամ լիճելու ձեզ

հետ. նա առանց այդ էլ ինձ էր պատկա-  
նում: Իմացէք, որ նա բոլոր սրտով ինձ էր  
սիրում եւ որ ես այն Դիւկէրնէն եմ: Վ.էր-  
տուայի հարեւանի որդին, որի հետ միասին  
Անժելան մեծացել է եւ որին սիրում էր  
դեռ շատ վաղ, նախ քան ձեզ յաջողեցաւ  
կախարդել նորան ձեր սատանայական հըմ-  
տութիւններով: Դեռ այն ժամանակ, երբ  
ես պատերազմ էի գնում: Անժելան արդէն  
զգաց, թէ ի՞նչ էի ես նորա համար, բայց  
արգէն ուշ էր: Ձեր չար դեւը ասաց ինձ,  
թէ ձեզ կարելի է ոչնչացնել միայն խա-  
ղովի, եւ աշա թէ ինչու համար ես էլ խա-  
ղացող գարձայ, հետեւեցի ձեզ ձենովայում  
եւ վերջապէս հասայ նպատակիս: Գնանք  
որեմն ձեր կնոջ մօտ:

Մէնարը բոլորովին ապշած կանգնած  
էր Դիւկէրնէի առաջ, զգալով իւր սրտում  
մի ամբողջ գժոխքի գոյութիւն: Զարհուրե-  
լի, նորա համար կասկածելի գաղտնիքը վա-  
րագուրուած էր մինչեւ այն ժամանակ, եւ  
այժմ միայն բացուելով—տեսաւ թէ ինչ  
կրակի մէջ է ձգել իւր Անժելային:

— Անժելան կարող է գնալ, եթէ կա-  
մենում է, ասաց նա խուլ ձայնով եւ գուրս

եկաւ: Գնդապետը ուրախութեամբ հետեւեց  
նորան:

Գալով այն տունը, ուր բնակվում էր  
Մէնարը, Դիւվէրնէն բռնեց Անժելայի սե-  
նեակի բռնակը: «Նա քնած է», շտապով  
կանգնեցրեց նորան Մէնարը, միթէ դուք  
կամենումէք խանգարել նորա խաղաղ  
քունը»:

— Հըմ...պատասխանեց Դիւվէրնէն, չեմ  
կարծում, որ նա խաղաղ քնած լինի գոնէ  
մի ժամ այն ժամանակից, երբ դուք նորան  
ողորմելի աղքատ դարձրիք:

Այս ասելով նա կամենումէր ներս մըտ-  
նել սենեակը, բայց Մէնարը չոքելով նորա  
առաջ յուսահատութեամբ աղաղակեց. «Քը-  
թացէք...դուք աղքատացրիք, գոնէ թողէք  
ինձ իմ կինը»:

— Հէնց այդպէս էլ ընկած էր ձեր առաջ  
ծեր Վէրտուան, բայց ոչ մի կերպով չը կա-  
րողացաւ կակղեցնել ձեր քարէ սիրով, այդ  
պատճառով էլ երկնքի արդար լրէժինդրու-  
թիւնը պէտք է թափուի ձեր վերայ»:

Այս ասելով Դիւվէրնէն ներս մտաւ  
Անժելայի սենեակը:

Մէնարը արագութեամբ առաջ անցաւ, մօ-  
տեցաւ այն անկողնուն որտեղ քնած էր նորա

կինը, բաց արեց վարագոյրը ձայնելով. «Ան-  
ժելա, Անժելա»: յետոյ խոնարհուեցաւ նորա  
առաջ, բռնեց նորա ձեռքերը եւ յանկարծ՝  
յուսահատութեամբ նոցա սեղմելով իւր  
գլխին՝ ահեղ ձայնով գոչեց. «Ահա վերցրէք-  
դուք տարաք իմ կնոջ դիակը»:

Գնդապետը զարհուրած ընկաւ անկող-  
նու վերայ: Մէնարը ճշմարիտ էր: Անժելան  
անշնչացած ընկած էր:

Դիւվէրնէն բռունցքներով խփելով իւր  
գլխին եւ վայրենի ձայներ արձակելով դուրս  
վաղեց սենեակից...»:

Թէ յետոյ ինչ պատահեցաւ նորան—  
այդ յայտնի չէ:

Անժանօթը վերջացնելով իւր պատմու-  
թիւնը վեր կացաւ նստարանից ու արագու-  
թեամբ հեռացաւ, նախ քան իւր շարժուած  
Զիգֆրիդը կը կարողանար մի խօսք անգամ  
ասել նորան:

Մի քանի օրից յետոյ անժանօթին գը-  
տան իւր սենեակում ջղային հարուածից  
հոգեւարքի մէջ: Մահը տեւեց մի քանի ժամ:  
որի ժամանակամիջոցում նա մի խօսք անգամ  
չը կարողացաւ ասել: Մնացած թղթերից իմա-

ցան, որ Բօդասսօն անունը, որ նա կրում  
էր—կեղծ էր, եւ որ այս մարդը ուրիշ ոչ  
ոք չէր, բայց եթէ դժբաղդ Մէնար ասպետը:  
Զիգֆրիդը իւր ծանօթութիւնը Մէնա-  
րի հետ երկնքից ուղարկուած մի նախազ-  
գուշութիւն համարեց, որ նորան մոլորուած  
ճանապարհից ուղիղ ճանապարհ դուրս բե-  
րի՝ եւ ազնիւ խօսք տուեց ընդդիմադրել  
բոլոր փորձութեանց նորից փորձելու իւր  
բաղդը խաղի մէջ:

Այս խօսքը նա պահեց անքակտելի կեր-  
պով:

«Ազգային գրադարան



NL0257031

